



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՆ ԱՆՈՒՆՈՒԹՅԱՆ



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝  
ՀԱԱՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՊԻՄ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թ. 11  
« 16 » Տպիսիս 2025 թ.

ՎԱԿԵՐԱՑՆՈՒՄ  
ՌԵԿՏՈՐ Հ. ԶԱԲՈՆՅԱՆ  
« 19 » 05 2025 թ.

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մասնագիտություն՝ (081101.00.6) ԱԳՈՆՈՆՈՄԻԱ  
Կրթական ծրագիր՝ (081101.01.6) ԱԳՐՈՆՈՄԻԱ, ՍԵԼԵԿՑԻԱ ԵՎ ԳԵՆԵՏԻԿԱ  
Որակավորում՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐ

Երևան 2025

<b>Բովանդակություն</b>	
1.	Ծրագրի ընդհանուր բնութագիրը
2.	Ծրագրի նպատակը
3.	Ծրագրի տարբերակիչ առանձնահատկությունները և մրցակցային առավելությունները
4.	Շրջանավարտի ընդհանրական կոմպետենցիաները
5.	Շրջանավարտի մասնագիտական կոմպետենցիաները
6.	Ծրագրի կառուցվածքը
7.	Դասավանդման և ուսումնառության մեթոդները
8.	Գնահատման մեթոդները
9.	Կրթական ծրագրի շրջանակներում իրականացվող պրակտիկական
10.	Մասնագիտական գործունեության ոլորտը և ապագա կարիերայի հնարավորությունները
11.	ՄԿԾ իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներ
12.	ՄԿԾ իրականացման համար պրոֆեսորադասախոսական և ուսումնասօժանդակ կազմին ներկայացվող պահանջներ
	Հավելվածներ
	Հավելված 1. Մասնագիտության կրթական ծրագրի ուսումնական պլան
	Հավելված 2. Մասնագիտության կրթական ծրագրի բաղադրիչների և շրջանավարտի կոմպետենցիաների համապատասխանության կառուցվածքային մատրից
	Հավելված 3. Բենչմարքինգ (ՄԿԾ-ի համահունչությունը նմանատիպ այլ ճանաչված ՄԿԾ-ների հետ)

<b>1. Ծրագրի ընդհանուր բնութագիրը</b>	
<b>Ֆակուլտետ</b>	Ազրոնոմիական
<b>Ամբիոն</b>	Բուսաբուծության և հողագիտության
<b>Ոլորտ/ Միջոլորտային բնագավառ</b>	Գյուղատնտեսություն
<b>Մասնագիտության (մասնագիտացման) անվանումը և դասիչը</b>	081101.00.6 Ազրոնոմիա
<b>Մասնագիտության կրթական ծրագիր</b>	081101.01.6 Ազրոնոմիա, սելեկցիա և գենետիկա
<b>ՄԿԾ պատասխանատու</b>	Գ.Ա. Թովմասյան
<b>Ուսուցման ձևը (առկա, հեռակա)</b>	Առկա, հեռակա
<b>Շնորհվող որակավորումը (բակալավր, մագիստրոս)</b>	Գյուղատնտեսության բակալավր
<b>Ուսուցման լեզուն</b>	Հայերեն
<b>Ծրագրի մուտքի ընդհանուր պահանջներ</b>	Միջնակարգ կրթություն, միջին մասնագիտական կրթություն

<b>Ուսուցման ընդհանուր տևողություն / կրեդիտ</b>	4 տարի, 240 կրեդիտ
որից՝ լսարանային ուսուցում (ա.թ.՝ տեսական, գործնական, լաբորատոր)	3244 ժամ
ինքնուրույն աշխատանք	2764 ժամ
քննաշրջան	24 շաբաթ
պրակտիկա	16 շաբաթ
ամփոփիչ ատեստավորում	4 շաբաթ
արձակուրդ	45 շաբաթ

## 2. Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակն է պատրաստել ագրարային արտադրության բուսաբուծական ճյուղի համար տարածաշրջանում մրցունակ, մասնագիտական հմտություններով ագրոտեխնոլոգիական ուղղվածությամբ բարձր որակավորմամբ մասնագետներ, ովքեր կկարողանան բուսաբուծական ոլորտի տարբեր արտադրություններում իրականացնել և վերահսկել ագրոտեխնոլոգիական տարբեր գործընթացներ, ապահովել բուսաբուծական արտադրության անվտանգ և անխափան գործունեությունը, մասնակցել գյուղատնտեսական մշակաբույսերի նոր սորտերի բուծման, ստացման, փորձարկման գործընթացներին, ընդլայնել բուսաբուծության ոլորտում շրջանացվող տարբեր մշակաբույսերի սորտային կազմը, մշակել և ներդնել ագրոտեխնոլոգիական նոր գործընթացներ բաց դաշտի և պաշտպանված գրունտի տարբեր պայմաններում միավոր տարածքներից բարձր արտադրողականություն և որակայալ արտադրանք ստացնելու համար:

## 3. Ծրագրի տարբերակիչ առանձնահատկությունները և մրցակցային առավելությունները

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը տարածաշրջանի ագրարային ուղղվածության եզակի համալսարաններից մեկն է, ուստի բացառություն չէ նաև «Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա» կրթական ծրագրով իրականացվող մասնագետների պատրաստման եզակիությունը:

- Հայաստանի Հանրապետությունն ունի լուրջ պոտենցիալ բուսաբուծական առաջնային տարբեր արտադրանքների արտադրության ոլորտում՝ անընդհատ զարգացման հեռանկարով:
- Ուսանողները հնարավորություն ունեն ուսումնառության ընթացքում՝ աշխատանքային կիսամյակում, կիրառել ստացած գիտելիքները բուսաբուծական տարբեր ճյուղերում, արտադրական գործընթացներին անմիջական մասնակցությամբ:
- ՀԱԱՀ ագրոնոմիական ֆակուլտետում դասավանդող պրոֆեսորադասախոսական անձնակազմը ոլորտի ճանաչված մասնագետներ են, գիտնականներ, հետազոտողներ:

## 3. Շրջանավարտի ընդհանրական կոմպետենցիաներ (ԸԿ)

**Ակնկալվում է, որ ՄԿԾ հաջող ավարտին ուսանողը կկարողանա՝**

ԸԿ 1. Քննադատորեն վերլուծել հասարակական գործընթացներին վերաբերող տեղեկատվությունը:

ԸԿ 2. Ցուցաբերել մասնագիտական կարողություններ արտադրության խնդիրները լուծելիս:

ԸԿ 3. Վերլուծել ագրոարտադրական գործընթացները մասնագիտական գործունեության ժամանակ:

ԸԿ 4. Օգտագործել իրենց ստացած հումանիտար գիտելիքները սոցիալական կարևորության գնահատման համար:

ԸԿ 5. Օգտագործել իրենց ստացած տնտեսագիտական գիտելիքները արտադրություն կազմակերպելու և արտադրության տարբեր ոլորտներում գործունեության արդյունքների արդյունավետությունը գնահատելու համար:

ԸԿ 6. Կիրառել տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական գործունեության ընթացքում և կարողությունները զարգացնելու համար:

ԸԿ 7. Հաղորդակցվել գրավոր և բանավոր (հայերեն և օտար լեզուներով), լուծելու համար միջանձնային, միջմշակութային և մասնագիտական խնդիրները փոխհամագործակցության պայմաններում:

ԸԿ 8. Աշխատել թիմով, արդյունավետ շփվել գործընկերների, ղեկավարների և սպառողների հետ՝ հանդուրժողականություն դրսևորելով սոցիալական, էթնիկ և մշակութային տարբերությունների նկատմամբ:

ԸԿ 9. Զբաղվել ինքնակրթությամբ, գիտակցված պլանավորել մասնագիտական առաջընթացը, իսկ ուսումը շարունակելու պարագայում՝ ընտրել ուսումնառության ուղղությունը, վայրն ու միջավայրը:

ԸԿ 10. Օգտագործել ստացած գիտելիքները առաջին օգնության և արտակարգ իրավիճակներում կողմնորոշվելու համար:

**4. ՄԿԾ շրջանավարտի մասնագիտական կոմպետենցիաներ (ՄԿ)**

**ՄԿԾ ավարտին ակնկալվում է, որ շրջանավարտը կկարողանա՝**

**ՄԿ 1.** Ներկայացնել բուսաբուծական արտադրության առանձնահատկություններն ու ագրոկենսաբանական գործընթացները մասնագիտական մեկնաբանություններով:

**ՄԿ 2.** Հիմնավորել գյուղատնտեսական մշակաբույսերի գոտիական շրջանացման և մասնագիտացման առաջնահերթությունները և բուսաբուծական արտադրանքի արտադրության օպտիմալացմանն ուղղված համակարգային հնարավոր լուծումները:

**ՄԿ 3.** Մեկնաբանել գյուղատնտեսական մշակաբույսերի սելեկցիայի և կենսատեխնոլոգիայի առաջադեմ մեթոդները, առաջնային սերմնաբուծության, սերմնարտադրության և սերմերի ու տնկանյութի որակի գնահատման նորմատիվ տեխնիկական պահանջները:

**ՄԿ 4.** Ներկայացնել հողային ռեսուրսների և բնական էկոհամակարգերի պահպանությանն ու արդյունավետ օգտագործմանն ուղղված ինդուստրիալ մեթոդները:

**ՄԿ 5.** Համադրել ագրոնոմիական բնագավառի և դրան սպասարկող ոլորտների ռեսուրսների հնարավորությունները:

**ՄԿ 6.** Կիրառել մշակաբույսերի սելեկցիային առնչվող ռեսուրսների ռացիոնալ օգտագործման հիմնարար սկզբունքներն ու մեթոդները:

**ՄԿ 7.** Վերլուծել շրջակա միջավայրի վրա բուսաբուծական արտադրության ունեցած ազդեցության ռիսկերը, բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման հնարավորությունները:

**ՄԿ 8.** Մեկնաբանել մշտապես փոփոխվող միջավայրի պայմաններում բուսաբուծական արտադրանքի կայուն արտադրության հիմնական մարտահրավերները:

**ՄԿ 9.** Կազմակերպել գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների և վնասատուների դեմ արդյունավետ պայքար՝ ապահովելով շրջակա միջավայրի էկոլոգիական անվտանգությունը:

**ՄԿԾ վերջնարդյունքներ՝ ըստ կոմպետենցիաների խմբերի**

**ՄԿ 1 վերջնարդյունքներ**  
 «Ներկայացնել բուսաբուծական արտադրության առանձնահատկություններն ու ազդեցության բնական գործընթացները մասնագիտական մեկնաբանություններով»  
 ՄԿԾ ավարտին ուսանողը կկարողանա՝

1.1	մեկնաբանել բուսաբուծական արտադրության առանձնահատկությունները, երկրագործության և դաշտավարության խնդիրները
1.2	հիմնավորել գյուղ. մշակաբույսերի շրջանացման, գոտիական մասնագիտացման ու բուսաբուծական արտադրանքի արտադրության օպտիմալացման համակարգային գործողությունները
1.3	ներկայացնել հողում մատչելի սննդատարերի հաշվեկշռի կարգավորման ուղիներն ու պարարտանյութերի կիրառման առանձնահատկությունները
1.4	գնահատել ազրոնոմիայի և մշակաբույսերի սելեկցիայի բնագավառի կայուն զարգացման արդի հնարավորություններն ու պահանջները
1.5	հիմնավորել մշակաբույսերի սորտերի ստացման տարաբնույթ ելանյութերի՝ այդ թվում՝ մշակաբույսերի վայրի ազգակիցների կարևորությունը, որպես բնական գենետիկական հարուստ ռեսուրսի
1.6	մեկնաբանել դաշտային, բանջարային պտղահատապտղային բույսերի մշակության, նոր սորտերի ստացման ու փորձարկման, բույսերի մշակության պայմանների բարելավմանը վերաբերող որակական և քանակական տվյալներ
1.7	հիմնավորել բաց դաշտի և պաշտպանված գրունտի պայմաններում մշակաբույսերի մշակության նորագույն և արդյունավետ տեխնոլոգիաներ, ուղղված բերքատվության բարձրացմանը և արտադրանքի որակական ցուցանիշների բարելավմանը

**ՄԿ 2 վերջնարդյունքներ**  
 «Հիմնավորել գյուղատնտեսական մշակաբույսերի գոտիական շրջանացման և մասնագիտացման առաջնահերթությունները և բուսաբուծական արտադրանքի արտադրության օպտիմալացմանն ուղղված համակարգային հնարավոր լուծումները»  
 ՄԿԾ ավարտին ուսանողը կկարողանա՝

2.1	իրականացնել հողի բերրիության բարձրացման, հողերի մելիորացման և պահպանման միջոցառումներ
2.2	հիմնավորել համալիր ազրոտեխնիկական միջոցառումների կատարման անհրաժեշտությունը դաշտավարության, այգեգործության և պտղաբուծության ոլորտներում

2.3	հիմնավորել մշակաբույսերի տեսակային կազմի տեղայնացման և տեխնոլոգիաների մշակման, սորտերի (հիբրիդների) ընտրության առաջնահերթություններն ըստ մշակության պայմանների և շրջանացման գոտիների
2.4	հիմնավորել մշակաբույսերի նոր սորտերի և պտղատուների նոր պատվաստակալների կիրառումը արտադրության մեջ ՀՀ գյուղատնտեսական տարբեր գոտիներում
2.5	մեկնաբանել սորտաթարմացման և սորտափոխության գործընթացների իրականացման պահանջները, իրագործել այդ ուղղությամբ կատարվող գործընթացներ
2.6	ներկայացնել պարարտանյութերի կիրառման առանձնահատկությունները՝ պայմանավորված հողի կլանողական հատկություններով

**ՄԿ 3 վերջնարդյունքներ**

«Մեկնաբանել գյուղատնտեսական մշակաբույսերի սելեկցիայի և կենսատեխնոլոգիայի առաջադեմ մեթոդները, առաջնային սերմնաբուծության, սերմնարտադրության և սերմերի ու տնկանյութի որակի գնահատման նորմատիվ տեխնիկական պահանջները»

ՄԿԾ ավարտին ուսանողը կկարողանա՝

3.1	կիրառելով սելեկցիայի գենետիկական մեթոդները՝ ստեղծել ժառանգական փոփոխականության բազմաթիվ նյութեր արդյունավետ ընտրություն համար
3.2	հիմնավորել սելեկցիոն աշխատանքների կազմակերպման տեխնիկան, սորտերի շրջանացման սկզբունքները, սելեկցիոն գործընթացի արագացման ուղիները
3.3	մեկնաբանել ժամանակակից կենսատեխնոլոգիայի հիմնական սկզբունքները և կիրառական նշանակությունը գյուղատնտեսության մեջ
3.4	առաջադրել սերտիֆիկացված յուրարմատ և պատվաստված տնկանյութի արտադրության տեխնոլոգիաներ
3.5	մեկնաբանել սորտաթարմացման և սորտափոխության գործընթացների անցկացման պահանջները, այդ ուղղությամբ իրականացվող գործընթացները
3.6	իրականացնել սորտային սերմերի պահանջի հաշվարկներ, դրանց արտադրությունն ապահովող գործընթացներ
3.6	մեկնաբանել սորտաթարմացման և սորտափոխության գործընթացների անցկացման պահանջները
3.7	իրագործել սորտաթարմացման և սորտափոխության ուղղությամբ իրականացվող գործընթացներ
3.8	ընտրել դաշտային, բանջարային և պտղահատապտղային մշակաբույսերի սորտեր՝ հաշվի առնելով տարածաշրջանի բնակլիմայական պայմանները և երկրագործության ինտենսիվացման մակարդակը

**ՄԿ 4 վերջնարդյունքներ**

«Ներկայացնել հողային ռեսուրսների և բնական էկոհամակարգերի պահպանության ու արդյունավետ օգտագործմանն ուղղված ինդուստրիալ մեթոդները»

ՄԿԾ ավարտին ուսանողը կկարողանա՝

4.1	իրականացնել գիտական հիմունքներով հողի մշակման տեխնոլոգիական գործընթացներ
4.2	հիմնավորել նախորդների դերը հողի բերրիության և հաջորդ մշակաբույսերի բերքատվության բարձրացման գործում
4.3	բարելավել գյուղատնտեսական մշակաբույսերի կյանքի պայմանները, անհրաժեշտ գործոններն ըստ գիտական երկրագործության օրենքների
4.4	առաջադրել դաշտային մշակաբույսերից բարձր և որակյալ բերք ստանալու համալիր ագրոմիջոցառումներ
4.5	իրականացնել արտադրական և փորձարարական աշխատանքներ՝ նոր պտղատեսակներով և սորտերով արտադրության արդյունավետության բարձրացման համար՝ կախված գյուղատնտեսական գոտիներից
4.6	առաջադրել բաց դաշտի և ծածկած գրունտի պայմաններում բանջարաբույսերի մշակության նորագույն և արդյունավետ տեխնոլոգիաներ, ուղղված արտադրանքի քանակական և որակական ցուցանիշների բարելավմանը
4.7	առաջադրել բնական կերային հանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարման արդյունավետ տեխնոլոգիաներ
4.8	հիմնավորել հողի պարարտացման համակարգում կիրառվող գլխավոր հանքային, օրգանական և կենսաբանական պարարտանյութերի գործածումը և դրանց արդյունավետ կիրառման ուղիները

**ՄԿ 5 վերջնարդյունքներ**  
«Համադրել ագրոնոմիական բնագավառի և դրան սպասարկող ոլորտների ռեսուրսների հնարավորությունները»  
ՄԿԾ ավարտին ուսանողը կկարողանա՝

5.1	տարբերակել ագրոկենսառեսուրսների օբյեկտները՝ տալով դրանց ագրոնոմիական գնահատականը
5.2	որոշել ագրոկենսառեսուրսների օբյեկտներից յուրաքանչյուրի դերն ու տեղը ագրոկենսաբազմազանության պաշարում
5.2	սահմանել ոռոգման համակարգի ջրանցքների հաշվարկային ծախսերը, ջրթողունակությունը, ջրանցքների շինարարական չափերը, ոռոգման համակարգի օգտակար գործողության գործակիցը՝ ելնելով հողային, կլիմայական հիդրոերկրաբանական պայմաններից
5.3	Ներկայացնել գյուղատնտեսության համար վտանգավոր օդերևութաբանական երևույթների՝ ցրտահարությունների, երաշտի, կարկուտի առաջացման պատճառները, այդ երևույթների դեմ կիրառվող պայքարի միջոցառումները
5.4	Կատարել կանխատեսումներ՝ ներկայացնելով առաջարկություններ անգամ անբարենպաստ ագրոկլիմայական պայմաններում արտադրական խնդիրների լուծման համար
5.5	Կազմել համապատասխան մեքենատրակտորային ագրեգատ՝ աշխատանքի առաջադրված ռեժիմով աշխատելու համար

**ՄԿ 6 վերջնարդյունքներ**

**«Կիրառել մշակաբույսերի սելեկցիային առընչվող ռեսուրսների ռացիոնալ օգտագործման հիմնարար սկզբունքներն ու մեթոդները»**  
**ՄԿԾ ավարտին ուսանողը կկարողանա՝**

6.1	ներկայացնել ժառանգականության բջջաբանական, մոլեկուլյար հիմունքները, ժառանգականության քրոմոսոմային տեսությունը, բջջային և գենային ինժեներիայի հիմունքները
6.2	գնահատել պտղահատապտղային տեսակների և դրանց վայրի ազգակիցների գենետիկական ռեսուրսները, դրանց պահպանման անհրաժեշտությունը
6.3	ներկայացնել գենետիկական ռեսուրսների պահպանության առավելություններն ու թերությունները, դրանց վայրի հավաքը, գնահատման և պահպանման սկզբունքները
6.4	իրականացնել սորտային սերմերի պահանջի հաշվարկներ՝ պլանավորելով և կազմակերպելով դրանց արտադրությունը
6.5	ընտրել սելեկցիոն ելանյութի ձևերը՝ որոշելով դրանց կոմբինացիոն ունակությունը
6.6	իրականացնել բույսերի գենետիկական ռեսուրսների ուսումնասիրմանն ու գնահատմանն ուղղված հետազոտական բնույթի աշխատանքներ՝ օգտագործելով գենետիկ ռեսուրսները սելեկցիայի ոլորտում

**ՄԿ 7 վերջնարդյունքներ**  
**«Վերլուծել շրջակա միջավայրի վրա բուսաբուծական արտադրության ունեցած ազդեցության ռիսկերը, բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման հնարավորությունները»**  
**ՄԿԾ ավարտին ուսանողը կկարողանա՝**

7.1	Ներկայացնել գյուղատնտեսական արտադրության միջավայրի էկոլոգիական խնդիրների լուծման հնարավորությունները, սկզբունքները, ժամանակակից մեթոդներն ու տեխնոլոգիաները
7.2	Կանխատեսել միջավայրի բաղադրիչների վիճակի բացասական փոփոխության միտումները՝ կիրառելով և կազմակերպելով դրանց կանխարգելման միջոցառումներ
7.3	Ընտրել հիմնավորված արդյունավետ մեթոդներ, միջոցառումներ և միջոցներ՝ վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումներ կազմակերպելու համար
7.4	Վերլուծել շրջակա միջավայրի վրա բուսաբուծական արտադրության ունեցած ազդեցության ռիսկերը
7.5	Ներկայացնել շրջակա միջավայրի բաղադրիչների՝ բնական կերային հանդակների կայուն կառավարման գործառույթները

**ՄԿ 8 վերջնարդյունքներ**  
**«Մեկնաբանել մշտապես փոփոխվող միջավայրի պայմաններում բուսաբուծական արտադրանքի կայուն արտադրության հիմնական մարտահրավերները»**  
**ՄԿԾ ավարտին ուսանողը կկարողանա՝**

8.1	Բուսաբուծական արտադրանքի կայուն արտադրության՝ մշտապես փոփոխվող նոր տեխնոլոգիաների միջավայրում ներկայացնել հիմնական մարտահրավերներին դիմակայելու հիմնական ագրոտեխնոլոգիական միջոցառումները
8.2	Կլիմայի փոփոխության միջավայրում ներկայացնել բուսաբուծական արտադրանքի կայուն արտադրությանն ուղղված հիմնական մարտահրավերներին դիմակայելու գործառույթները
8.3	Գնահատել ագրոարդյունաբերական ոլորտում իրականացվող տեխնոլոգիական գործընթացների ռիսկերը
8.4	Կանխատեսել միջավայրի բաղադրիչների վիճակի բացասական փոփոխության միտումները՝ կիրառելով և կազմակերպելով դրանց կանխարգելման միջոցառումներ

#### **ՄԿ 9 վերջնարդյունքներ**

«Կազմակերպել գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների և վնասատուների դեմ արդյունավետ պայքար՝ ապահովելով շրջակա միջավայրի էկոլոգիական անվտանգությունը»

ՄԿԾ ավարտին ուսանողը կկարողանա՝

9.1	Ներկայացնել դաշտավարության, պտղաբուծության և այգեգործության ոլորտներում առաջացած թափոնների և օգտագործվող քիմիական պատրաստուկների մնացորդների վնասակար ազդեցությունը շրջակա միջավայրի վրա
9.2	Մշակել առանց թափոնների և մնացորդային քիմիական պատրաստուկների բուսաբուծական արտադրության կազմակերպման եղանակներ
9.3	Կանխատեսել միջավայրի բաղադրիչների վիճակի բացասական փոփոխության միտումները, դրանց կանխարգելման միջոցառումների համար
9.4	Ներկայացնել գյուղատնտեսական արտադրության միջավայրի էկոլոգիական խնդիրների լուծման գործում տեխնիկական միջոցները, մեթոդները, խնդիրների լուծման տեխնոլոգիաները
9.5	Կատարել գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների և հիվանդությունների ախտորոշում և վնասակարության աստիճանի գնահատում
9.6	Մշակել ինտեգրացված պայքարի արդյունավետ և էկոլոգիապես քիչ վտանգավոր միջոցառումներ

#### **6. Ծրագրի կառուցվածքը**

##### **6.1. Ուսումնական պլան (հավելված 1)**

**6.2.** Մասնագիտության կրթական ծրագրի բաղադրիչների և շրջանավարտի կոմպետենցիաների համապատասխանության կառուցվածքային մատրից (հավելված 2)

**6.3.** Բենչմարքինգ (ՄԿԾ-ի համահունչությունը նմանատիպ այլ ճանաչված ՄԿԾ-ների հետ (հավելված 3)

##### **6.4. Ծրագրի առարկաների համառոտ նկարագիրը**

Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	<b>Բուսաբանություն</b>
Դասընթացի տեսակը	<input checked="" type="checkbox"/> Պարտադիր <input type="checkbox"/> Կամընտրային
Անցկացման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	8
Դասընթացի անցկացման կիսամյակը	1-ին կիսամյակ
Մուտքային պահանջներ	Մուտքային պահանջներ չկան
Դասընթացի նպատակը	Ուսանողների մոտ ձևավորել հիմնական հասկացությունները կենդանի օրգանիզմների բջջային կառուցվածքի, բույսերի կյանքի կազմակերպման մակարդակների մասին, ծանոթացնել բույսերի անատոմիական և մորֆոլոգիական կառուցվածքային առանձնահատկություններին, կենսական գործառույթներին, բույսերի բազմացման եղանակներին, բուսական աշխարհի բազմազանության դասակարգման սկզբունքներին, կարգաբանական խմբերի ֆիլոգենետիկ կապերին և էվոլյուցիայի տարբեր ուղղություններին
Դասընթացի վերջնարդյունքները	<p><b>Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ներկայացնել բուսաբանության խնդիրները և ժամանակակից մեթոդները:</li> <li>2. Տարբերակել բույսերի, բույսերի օրգանների մորֆոլոգիական և անատոմիական կառուցվածքային առանձնահատկությունները:</li> <li>3. Մեկնաբանել բույսերի դասակարգման հիմունքները:</li> <li>4. Տարբերակել օրգանիզմներն ըստ բջջային կազմության, կենսակերպի, արտաքին և ներքին կառուցվածքի, բազմացման առանձնահատկությունների և մորֆոլոգիական հատկանիշների:</li> <li>5. Ներկայացնել կենսաբանական օբյեկտների ուսումնասիրության, նկարագրության, դասակարգման և նույնականացման մեթոդները:</li> <li>6. Որոշիչների օգնությամբ և ըստ մորֆոլոգիական հատկանիշների տարբերակել բուսատեսակների ընտանիքները, ցեղերը և տեսակները, վայրի և մշակովի բույսերը:</li> </ol>

<p><b>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</b></p>	<p><b>Դասավանդման մեթոդներ՝</b> ինտերակտիվ դասախոսություն, նյութի վերլուծություն, քննարկումների, բանավեճերի վարում, ուսուցողական ֆիլմերի, տեսանյութերի դիտում բացատրական-ցուցադրական, արտալսարանային դասախոսություններ, կլոր սեղան, թիմային աշխատանք, մտազրոհ</p> <p><b>Ուսումնառության մեթոդներ՝</b> դասախոսության ունկնդրում, ուսումնամեթոդական և էլեկտրոնային գրականության ուսումնասիրություն, մասնագիտական տեսանյութերի և հեռուստահաղորդումների դիտում, ինքնուրույն աշխատանքների կատարում</p>
<p><b>Գնահատման մեթոդները</b></p>	<p>Թեստ, ինքնուրույն աշխատանքի գնահատում</p>

<p><b>Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ</b></p>	
<p><b>Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)</b></p>	<p>Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա</p>
<p><b>Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)</b></p>	
<p><b>Դասընթացի անվանումը</b></p>	<p><b>Հայոց լեզու</b></p>
<p><b>Դասընթացի տեսակը</b></p>	<p><input checked="" type="checkbox"/> Պարտադիր <input type="checkbox"/> Կամընտրային</p>
<p><b>Դասավանդման լեզուն</b></p>	<p>Հայերեն</p>
<p><b>Կրեդիտները (ECTS)</b></p>	<p>2</p>
<p><b>Դասընթացի անցկացման կիսամյակը</b></p>	<p>1-ին կիսամյակ</p>
<p><b>Մուտքային պահանջներ</b></p>	<p>Մուտքային պահանջներ չկան</p>
<p><b>Դասընթացի նպատակը</b></p>	<p>Ամրապնդել լեզվական համակարգի վերաբերյալ նախնական գիտելիքները և իմացության շրջանակը, զարգացնել ուսանողների լեզվամտածողությունը, հարստացնել գործուն բառապաշարը, սովորեցնել բանավոր և գրավոր խոսքում օգտագործել բազմիմաստ բառեր, հոմանիշներ, հականիշներն, համանուններ, դարձվածքներ, վերլուծել մասնագիտական տեքստերը</p>
<p><b>Դասընթացի վերջնարդյունքները</b></p>	<p><b>Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>Արտահայտել սեփական մտքերն անկաշկանդ բանավոր և գրավոր կապակցված խոսքով՝ ապահովելով գրական հայերեն խոսքին ներկայացվող բոլոր պահանջները՝ ուղղախոսական, ուղղագրական, բառապաշարային, քերականական, ոճական, տրամաբանական:</li> <li>Բանավոր և գրավոր խոսքում տարբերել բազմիմաստ բառերի նշանակությունները՝ ելնելով տեքստի բովանդա-</li> </ol>

	<p>կույթունից, ընկալել հոմանիշների և հականիշների ոճական արժեքը, բառերի ու դարձվածքների փոխաբերական իմաստները:</p> <p>3. Կազմել տեխնիկական բնույթի տեքստեր կամ գործնական գրություններ՝ դրանք լեզվական ընդունված կաղապարներով ներկայացնելով, գեկուցումներով հանդես գալով:</p> <p>4. Օգտագործել դասագրքերը, բառարանները, տեղեկատվական տեխնոլոգիաները, համացանցը՝ գիտելիքները հարստացնելով լեզվին, խոսքին և հաղորդակցությանը վերաբերող այլ նյութերով:</p>
<b>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</b>	<p><b>Դասավանդման մեթոդներ՝</b> ԽԻԿ համակարգի (խթանում, իմաստավորում, կշռադատում) կիրառում, մտագրոհ, ձնագնդի մեթոդ, զրույց և այլն, ինքնուրույն աշխատանքի և առաջադրանքների կատարում, անդրադարձ-ամփոփում</p> <p><b>Ուսումնառության մեթոդներ՝</b> ուսումնամեթոդական գրականության ուսումնասիրում, գործնական և ինքնուրույն աշխատանքների կատարում</p>
<b>Գնահատման մեթոդները</b>	Թեստեր, ինքնուրույն աշխատանք

<b>Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ</b>	
<b>Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)</b>	Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա
<b>Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)</b>	
<b>Դասընթացի անվանումը</b>	<b>Հայոց պատմություն</b>
<b>Դասընթացի տեսակը</b>	<input checked="" type="checkbox"/> Պարտադիր <input type="checkbox"/> Կամընտրային
<b>Անցկացման լեզուն</b>	Հայերեն
<b>Կրեդիտները (ECTS)</b>	2 կրեդիտ
<b>Դասընթացի անցկացման կիսամյակը</b>	1-ին
<b>Մուտքային պահանջներ</b>	Մուտքային պահանջներ չկան
<b>Դասընթացի նպատակը</b>	Խորացնել ուսանողների գիտելիքները պատմության վերաբերյալ, զարգացնել պատմատրամաբանական մտածողությունը և հնարավոր բարդ իրադրություններում ճիշտ կողմնորոշվելու կարողությունը
<b>Դասընթացի վերջնարդյունքները</b>	<p><b>Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.</b></p> <p>1. Կիրառել քննադատական մտածողություն անցյալի և ներկայի պատմական դեպքերը գնահատելիս:</p>

	<p>2. Հենվել պատմական փաստերի քննական վերլուծության վրա՝ ներկայիս քաղաքական գործընթացները գնահատելիս:</p> <p>3. Ներկայացնել իրադարձությունները և վերլուծել ժամանակի և տարածության մեջ (աշխարհագրական դիրք, բնական ռեսուրսներ և այլն):</p> <p>4. Գնահատել աշխարհաքաղաքական իրողության հաշվառմամբ զարգացման ժամանակակից միտումները:</p> <p>5. Պատրաստել և ներկայացնել պատմական թեմաներով ինքնուրույն աշխատանք, վարել բանավեճեր՝ պահպանելով էթիկայի կանոնները:</p>
<b>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</b>	<p><b>Դասավանդման մեթոդներ՝</b> ինտերակտիվ դասախոսություն, նյութի վերլուծություն, քննարկումների, բանավեճերի վարում, ուսուցողական ֆիլմերի, տեսանյութերի դիտում բացատրական-ցուցադրական, արտալսարանային դասախոսություններ, կլոր սեղան, թիմային աշխատանք, մտազրոհ</p> <p><b>Ուսումնառության մեթոդներ՝</b> դասախոսության ունկնդրում, ուսումնամեթոդական և էլեկտրոնային գրականության ուսումնասիրություն, մասնագիտական տեսանյութերի և հեռուստահաղորդումների դիտում, ինքնուրույն աշխատանքների կատարում</p>
<b>Գնահատման մեթոդները</b>	Թեստային աշխատանք, ինքնուրույն աշխատանք

<b>Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ</b>	
<b>Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)</b>	Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա
<b>Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)</b>	
<b>Դասընթացի անվանումը</b>	<b>Օտար լեզու (ռուսերեն)</b>
<b>Դասընթացի տեսակը</b>	<input checked="" type="checkbox"/> Պարտադիր <input type="checkbox"/> Կամընտրային
<b>Դասավանդման լեզուն</b>	Ռուսերեն
<b>Կրեդիտները (ECTS)</b>	4
<b>Դասընթացի անցկացման կիսամյակը</b>	1-ին կիսամյակ
<b>Մուտքային պահանջներ</b>	Մուտքային պահանջներ չկան
<b>Դասընթացի նպատակը</b>	Ապահովել ռուսերենի՝ որպես հաղորդակցման միջոցի օգտագործումը առօրյայում, կենցաղային, մշակութային և կրթական ոլորտներում:
<b>Դասընթացի վերջնարդյունքները</b>	<b>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.</b>

	<ol style="list-style-type: none"> <li>1. Օտագործել ռուսերենի առօրյա-խոսակցական, համագործածական, ընդհանուր գիտական բառապաշարը համապատասխան ոլորտներում:</li> <li>2. Պատմել իր ապագա մասնագիտության, պլանների, երկրի մասին:</li> <li>3. Պատմել կրթական, մշակութային, ընդհանուր գիտական բնույթի տեքստեր՝ դուրս բերելով անհրաժեշտ տեղեկություն:</li> <li>4. Ձևակերպել սեփական կարծիքը կարդացած նյութի վերաբերյալ:</li> <li>5. Ինքնուրույն կազմել տարբեր ոճերի փոքրածավալ տեքստեր:</li> </ol>
<b>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</b>	<b>Դասավանդման մեթոդներ՝</b> բացատրություն, տեսալսողական (аудиовизуальный), ինդուկտիվ, համադրության մեթոդներ <b>Ուսումնառության մեթոդներ՝</b> գրավոր աշխատանք, խոսքային (вербальный) մեթոդ, քննարկում, ուսուցողական խաղեր
<b>Գնահատման մեթոդները</b>	Ինքնուրույն աշխատանք, ընթացիկ (միջանկյալ) և ավարտական քննություններ՝ թեստային տարբերակով

Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
<b>Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)</b>	Ազրոնոմիա, սելեկցիա և գենետիկա
<b>Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)</b>	
<b>Դասընթացի անվանում</b>	<b>Բարձրագույն մաթեմատիկա</b>
<b>Դասընթացի տեսակը</b>	<input checked="" type="checkbox"/> Պարտադիր <input type="checkbox"/> Կամընտրային
<b>Դասավանդման լեզուն</b>	Հայերեն
<b>Կրեդիտները (ECTS)</b>	6 կրեդիտ
<b>Դասընթացի անցկացման կիսամյակը</b>	1-ին կիսամյակ
<b>Մուտքային պահանջներ</b>	Մուտքային պահանջներ չկան
<b>Դասընթացի նպատակը</b>	Զարգացնել ուսանողի տրամաբանական, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունները
<b>Դասընթացի վերջնարդյունքները</b>	<b>Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.</b> <ol style="list-style-type: none"> <li>1. Ներկայացնել բարձրագույն մաթեմատիկայի պարզագույն խնդիրները և դրանց լուծման մեթոդները:</li> <li>2. Հետադարձ կատարել մաթեմատիկական գործողություններ, վարժ տիրապետել դիֆերենցիալ և ինտեգրալ հաշվի մեթոդներին:</li> <li>3. Հմտորեն կիրառել գծային հանրահաշվի, մաթեմատիկական անալիզի և հավանականությունների տեսության</li> </ol>

	<p>բաժիններից ստացած գիտելիքները կիրառական խնդիրներում:</p> <p>4. Վերլուծել կիրառական խնդիրները՝ գնահատելով դրանց լուծման հնարավոր ուղիները:</p> <p>5. Կիրառել հետազոտական հիմնական մեթոդներ գործնական խնդիրներ լուծելիս:</p>
<b>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</b>	<p><b>Դասավանդման մեթոդներ՝</b> դասախոսություն, լաբորատոր պարապմունքներ, տեսական նյութի մատուցում և համապատասխան խնդիրների քննարկում, գործնական խնդիրների լուծում</p> <p><b>Ուսումնառության մեթոդներ՝</b> կիրառական խնդիրների ուսումնասիրություն և ինքնուրույն վերլուծություն, դրանց համապատասխան տնային հանձնարարությունների կատարում</p>
<b>Գնահատման մեթոդները</b>	Ընթացիկ և վերջնական ստուգումներ, որոնք իրականացվում են հաճախումների և ինքնուրույն աշխատանքների, միջանկյալ և ամփոփիչ քննությունների արդյունքներով, որոնք անցկացվում են թեստային տարբերակով

Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	<b>Կիրառական ինֆորմատիկա</b>
Դասընթացի տեսակը	<input checked="" type="checkbox"/> Պարտադիր <input type="checkbox"/> Կամընտրային
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	6
Դասընթացի անցկացման կիսամյակը	1-ին կիսամյակ
Մուտքային պահանջներ	Դասընթացը տրամաբանորեն փոխկապակցված է «Բարձրագույն մաթեմատիկա» առարկայի հետ
Դասընթացի նպատակը	Ուսումնասիրել ինֆորմացիայի մշակման և վերլուծության եղանակներն ու մեթոդները, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները ոլորտային խնդիրները լուծելիս և ուսանողի մոտ ձևավորել բազային գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ՝ օֆիսային և մասնագիտական ծրագրային միջոցների կիրառման համար:
Դասընթացի վերջնարդյունքները	<p><b>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.</b></p> <p>1. Ներկայացնել տվյալների հավաքագրման, մշակման և վերլուծության մեթոդներն ու գործիքակազմը՝ համակարգչային տեխնոլոգիաներով:</p>

	<p>2. Ներկայացնել համակարգչի տեխնիկական և ծրագրային միջոցների դերակատարությունը, ժամանակակից կիրառական ծրագրային միջոցների հնարավորությունները:</p> <p>3. Մշակել մասնագիտական ոլորտին վերաբերող էլեկտրոնային փաստաթղթեր, մասնագիտական ոլորտին վերաբերող պարզ տվյալների բազաներ՝ օգտագործելով տեղեկատվական տեխնոլոգիաներ և պատրաստելով մասնագիտական ոլորտին վերաբերող շնորհանդեսներ:</p> <p>4. Վերլուծել տվյալներ՝ օֆիսային և մասնագիտական ծրագրային միջոցների գործիքակազմի կիրառմամբ, կառուցելով միասնական տվյալների բազա:</p> <p>5. Միավորել համակարգչային ծրագրային ապահովման գիտելիքներն ու հմտությունները՝ ընդհանուր նշանակության և մասնագիտական ոլորտի խնդիրներ լուծելու համար:</p> <p>6. Գնահատել մասնագիտական գործունեության արդյունավետությունը համակարգչային ծրագրերի գործիքախմբի օգտագործման միջոցով՝ մեկնաբանելով համակարգչային վերլուծության արդյունքները:</p>
<b>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</b>	<p><b>Դասավանդման մեթոդներ՝</b> ներկայացում-վիզուալիզացիա, երկխոսություն, խմբակային քննարկում</p> <p><b>Ուսումնառության մեթոդներ՝</b> համակարգչային խնդիրների լուծում ուսումնամեթոդական գրականության և այլ նյութերի ուսումնասիրում, առաջադրանքների կատարում՝ կիրառելով MS Office փաթեթի ծրագրակազմը</p>
<b>Գնահատման մեթոդները</b>	Ինքնուրույն աշխատանք, միջանկյալ և ամփոփիչ քննություններ, թեստեր

<b>Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ</b>	
<b>Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)</b>	Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա (բակալավր)
<b>Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)</b>	
<b>Դասընթացի անվանումը</b>	<b>Գյուղատնտեսության էկոնոմիկա</b>
<b>Դասընթացի տեսակը</b>	<input checked="" type="checkbox"/> Պարտադիր <input type="checkbox"/> Կամընտրային
<b>Դասավանդման լեզուն</b>	Հայերեն
<b>Կրեդիտները (ECTS)</b>	3 կրեդիտ
<b>Դասընթացի անցկացման կիսամյակը</b>	2-րդ կիսամյակ
<b>Մուտքային պահանջներ</b>	Առարկան տրամաբանորեն փոխկապակցված է «Բարձրագույն մաթեմատիկան» և «Կիրառական ինֆորմատիկա» առարկաների հետ:

<b>Դասընթացի նպատակը</b>	Ձևավորել հիմնարար գիտելիքներ, կարողություններ և գործնական հմտություններ գյուղատնտեսության ոլորտի ներկայիս խնդիրների վերհանման, արդյունավետության գնահատման, ֆինանսավորման ուղղությունների ընտրության և պետական աջակցության ծրագրերի ներգրավման գործում:
<b>Դասընթացի վերջնարդյունքները</b>	<p><b>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ներկայացնել ագրարային ոլորտի հիմնական հասկացություններն ու հայեցակարգերը, լուսաբանելով արտադրության տնտեսական հիմունքները:</li> <li>2. Տարբերակել արտադրական ռեսուրսային ներուժի վիճակի գնահատման և արդյունավետ օգտագործման մեթոդները:</li> <li>3. Հիմնավորել գյուղատնտեսական արտադրության արդյունավետ մասնագիտացման, կենտրոնացման, կոոպերացման և ինտեգրման գործընթացների տնտեսական նշանակությունը:</li> <li>4. Ներկայացնել ագրարային ոլորտի աշխատանքային ռեսուրսների առանձնահատկություններն ու դրանց արդյունավետ օգտագործման ցուցանիշների համակարգը:</li> <li>5. Պարզաբանել արտադրական ծախսերի, դրանց կազմավորման վրա ազդող գործոնների և ծախսերի օպտիմալացման ուղիները:</li> <li>6. Մեկնաբանել գյուղատնտեսական արտադրանքի գնագոյացման կառուցակարգը:</li> </ol>
<b>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</b>	<p><b>Դասավանդման մեթոդներ՝</b> դասախոսություն, լաբորատոր աշխատանքի, հաշվարկների կատարում, տեսական նյութի բացատրություն</p> <p><b>Ուսումնառության մեթոդներ՝</b> ցուցադրական նյութի էլեկտրոնային ներկայացում, խմբային քննարկում, գրավոր հանձնարարական-քննարկումներ</p>
<b>Գնահատման մեթոդները</b>	Ինքնուրույն աշխատանք, միջանկյալ և ամփոփիչ քննություններ, թեստեր

<b>Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ</b>	
<b>Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)</b>	Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա (բակալավր)
<b>Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)</b>	
<b>Դասընթացի անվանումը</b>	<b>Օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն)</b>
<b>Դասընթացի տեսակը</b>	<input checked="" type="checkbox"/> Պարտադիր <input type="checkbox"/> Կամընտրային
<b>Դասավանդման լեզուն</b>	Անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն
<b>Կրեդիտները (ECTS)</b>	8

<b>Դասընթացի անցկացման կիսամյակը</b>	2-րդ կիսամյակ
<b>Մուտքային պահանջներ</b>	Մուտքային պահանջներ չկան
<b>Դասընթացի նպատակը</b>	Բարձրացնել անգլերենի իմացության մակարդակը, զարգացնել հաղորդակցական կոմպետենցիաները
<b>Դասընթացի վերջնարդյունքները</b>	<b>Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.</b> 1. Թարգմանել տեքստեր: 2. Վերարտադրել կարդացած տեքստը: 3. Վերլուծել ընթերցած տեքստը օտար լեզվով: 4. Գործածել բավականաչափ քերականական կառույցներ: 5. Գործածել առօրյա կարիքների հետ կապված մտապահված սահմանափակ բառապաշար: 6. Հաղորդակցվել անցած թեմաների շուրջ:
<b>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</b>	<b>Դասավանդման մեթոդներ՝</b> «մտագրոհ», խճանկարի մեթոդ, անհատական աշխատանք, բանավեճ, ֆիլմերի դիտում, լսողական վարժություններ, երկխոսություն, քննարկումներ, թիմային աշխատանքներ, տեսասահիկներով ներկայացում  <b>Ուսումնառության մեթոդներ՝</b> տեքստերի թարգմանություն, գրույց
<b>Գնահատման մեթոդները</b>	Քննություն

<b>Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ</b>	
<b>Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)</b>	Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա (բակալավր)
<b>Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)</b>	
<b>Դասընթացի անվանումը</b>	<b>Հասարակագիտական առարկաների մոդուլ (Հայոց պատմություն, մշակութաբանություն, քաղաքագիտություն, փիլիսոփայություն)</b>
<b>Դասընթացի տեսակը</b>	<input checked="" type="checkbox"/> Պարտադիր <input type="checkbox"/> Կամընտրային
<b>Անցկացման լեզուն</b>	Հայերեն
<b>Կրեդիտները (ECTS)</b>	6 կրեդիտ
<b>Դասընթացի անցկացման կիսամյակը</b>	2-րդ կիսամյակ
<b>Մուտքային պահանջներ</b>	Մուտքային պահանջներ չկան
<b>Դասընթացի նպատակը</b>	Նպաստել ուսանողների աշխարհայացքի ընդլայնմանը, քաղաքացիական դիրքորոշում ունենալու կարողության ձևավորմանը, ուսանողների մոտ հետաքրքրություն արթնացնել հումանիտար գիտությունների և արվեստի նկատմամբ, ձևավորել հասարակությանն առնչվող խնդիրների

	նկատմամբ այլընտրանքային մոտեցումներ ցուցաբերելու կարողություն, նպաստել համամարդկային արժեքների համատեքստում ազգային պատմության և մշակույթի արժևորմանը, ուսանողների մշակութային ճաշակի զարգացմանը:
<b>Դասընթացի վերջնարդյունքները</b>	<p><b>Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Հիմնավորել սեփական տեսակետներն ու դիրքորոշումները հասարակական երևույթները գնահատելիս:</li> <li>2. Քննադատորեն վերլուծել և ամփոփել հասարակական գործընթացներին վերաբերող տեղեկատվությունը:</li> <li>3. Բանավիճել՝ պահպանելով փաստարկման կանոնները (այդ թվում՝ էթիկական):</li> <li>4. Ներկայացնել գաղափարների ազդեցությունը հասարակության զարգացման վրա (փիլիսոփայական միտք, քաղաքական գաղափարներ, մշակութային ձեռքբերումներ):</li> <li>5. Բնութագրել ազգային յուրահատկությունները մշակութային բազմազանության համատեքստում:</li> </ol>
<b>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</b>	<p><b>Դասավանդման մեթոդներ՝</b> տեղեկատվական և ակնարկային դասախոսություններ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, զննական ճանաչողական-ստեղծագործական, համագործակցային ուսուցման մեթոդներ, թեմատիկ քննարկումներ և բանավեճեր, հարց ու պատասխան, կլոր սեղան, թիմային աշխատանք</p> <p><b>Ուսումնառության մեթոդներ՝</b> դասախոսության ունկնդրում, ուսումնամեթոդական, էլեկտրոնային գրականության ուսումնասիրում, մասնագիտական տեսանյութերի և հեռուստահաղորդումների դիտում, ինքնուրույն աշխատանքների կատարում, ինտերակտիվ քննարկումներ:</p>
<b>Գնահատման մեթոդները</b>	Թեստեր, ինքնուրույն աշխատանք

<b>Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ</b>	
<b>Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)</b>	Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա
<b>Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)</b>	
<b>Դասընթացի անվանումը</b>	<b>Ֆիզիկա կենսաֆիզիկայի հիմունքներով</b>
<b>Դասընթացի տեսակը</b>	<input checked="" type="checkbox"/> Պարտադիր <input type="checkbox"/> Կամընտրային
<b>Դասավանդման լեզուն</b>	Հայերեն
<b>Կրեդիտները (ECTS)</b>	5 կրեդիտ
<b>Դասընթացի անցկացման կիսամյակը</b>	2-րդ կիսամյակ

<b>Մուտքային պահանջներ</b>	Մուտքային պահանջներ չկան
<b>Դասընթացի նպատակը</b>	Ուսանողներին հաղորդել բնության երևույթների, նյութերի կառուցվածքի և փոխակերպումների, կենդանի և անկենդան համակարգերում ընթացող ֆիզիկական երևույթների վերաբերյալ համակողմանի գիտելիքներ, լաբորատոր աշխատանքների միջոցով ձևավորել ունակություններ փորձարարական չափիչ և ախտորոշիչ սարքերից օգտվելու, ստացված արդյունքները մեկնաբանելու և համակարգելու համար:
<b>Դասընթացի վերջնարդյունքները</b>	<p><b>Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Հստակ պատկերացնել յուրաքանչյուր ագրոպրոցեսում, առանձին սարքավորումներում և հոսքագծերի աշխատանքային սկզբունքներում ֆիզիկական պրոցեսների կիրառման մեխանիզմը:</li> <li>2. Կիրառել ֆիզիկայի փորձնական եղանակները ագրոպրոցեսների արդյունքում ստացված արտադրանքի որակի հետազոտություններում:</li> <li>3. Կիրառել ագրոպրոցեսների կազմակերպման, անհրաժեշտ սարքավորումների, դրանց քանակությունների ընտրության, հիմնական և օժանդակ շինությունների մակերեսների, էներգիական հզորությունների, ֆիզիկատեխնիկական վերահսկման խնդիրներում:</li> <li>4. Կիրառել ֆիզիկայի բնագավառի տեսական գիտելիքները ագրոարտադրական գործընթացներում, նոր տեխնոլոգիաների ներդրման և զարգացման նպատակով:</li> <li>5. Կատարել ագրոսարքավորումների, տարողությունների և հզորությունների ընթացիկ հաշվարկ:</li> </ol>
<b>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</b>	<p><b>Դասավանդման մեթոդներ`</b> դասախոսություն, լաբորատոր աշխատանք, անհմացիոն նյութերի ցուցադրում և մեկնաբանում</p> <p><b>Ուսումնառության մեթոդներ`</b> տեսական նյութի յուրացում, լաբորատոր աշխատանքների կատարում, ինքնուրույն աշխատանքների պատրաստում</p>
<b>Գնահատման մեթոդները</b>	Ընթացիկ և վերջնական ստուգումներ` հաճախումների և ինքնուրույն աշխատանքների, միջանկյալ և ամփոփիչ քննությունների արդյունքներով

<b>Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ</b>	
<b>Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)</b>	Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա
<b>Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)</b>	
<b>Դասընթացի անվանումը</b>	<b>Հայոց լեզու և խոսքի մշակույթ</b>

Դասընթացի տեսակը	<input checked="" type="checkbox"/> Պարտադիր <input type="checkbox"/> Կամընտրային
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	2
Դասընթացի անցկացման կիսամյակը	2-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Մուտքային պահանջներ չկան
Դասընթացի նպատակը	Ձևավորել գրագետ և տրամաբանված բանավիճելու կարողության զարգացում, քննադատական մտածողության ձևավորում, ինչը կնպաստի ուսանողի ինքնադրսևորմանը ոչ միայն մասնագիտական ոլորտում, այլև հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:
Դասընթացի վերջնարդյունքները	<p><b>Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Սահմանել լեզվական և խոսքային կաղապարների ընդհանրություններն ու տարբերությունները:</li> <li>2. Օգտագործել ստացած գիտելիքները բանավոր և գրավոր խոսք կազմելիս:</li> <li>3. Իրականացնել հաղորդակցում տարբեր իրադրություններում:</li> <li>4. Կատարել լեզվական տարաբնույթ վարժություններ՝ բառամթերքը վերցնելով տեխնիկական, պաշտոնական կամ գիտական ոլորտներից:</li> <li>5. Օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաները, համացանցը՝ գիտելիքները հարստացնելով լեզվին, խոսքին և հաղորդակցությանը վերաբերող այլ նյութերով:</li> </ol>
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	<p><b>Դասավանդման մեթոդներ՝</b> ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ. մտազրոհ, ձևազնդի մեթոդ, բանավեճ-քննարկում, «կլոր սեղան» մեթոդ» (որևէ հարցի քննարկում, կարծիքների համեմատություն, մտքերի, գաղափարների ձևավորում, արտահայտում), «ուղեղի փոթորիկ» (լուծումների, մտքերի հավաք, բոլոր առաջարկների վերլուծություն և ամենահետաքրքիր տարբերակի ընտրություն)</p> <p><b>Ուսումնառության մեթոդներ՝</b> երկխոսություն, քննարկումներ, ինքնուրույն, թիմային աշխատանքներ, զեկուցումներ, ելույթներ, բանավեճեր</p>
Գնահատման մեթոդները	Թեստեր, ինքնուրույն աշխատանք

Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	

<b>Դասընթացի անվանումը</b>	<b>Ընդհանուր քիմիա</b>
<b>Դասընթացի տեսակը</b>	<input checked="" type="checkbox"/> Պարտադիր <input type="checkbox"/> Կամընտրային
<b>Դասավանդման լեզուն</b>	Հայերեն
<b>Կրեդիտները (ECTS)</b>	7
<b>Դասընթացի անցկացման կիսամյակը</b>	2-րդ կիսամյակ
<b>Մուտքային պահանջներ</b>	Մուտքային պահանջներ չկան
<b>Դասընթացի նպատակը</b>	Ծանոթացնել «Քիմիա» գիտության բոլոր ճյուղերի տեսական և կիրառական դրույթներին, որոնք օգտակար կլինեն մասնագիտական գործունեության ընթացքում, գիտելիքներ հաղորդել քիմիական տարրերի/նյութերի կենսաքիմիական հատկությունների, շրջակա միջավայրում դրանց դերի, նշանակության ու փոխարկումների վերաբերյալ, հիմնավորել քիմիական պրոցեսների դերը շրջակա միջավայրում և բույսերում ու կենդանիների օրգանիզմներում տեղի ունեցող տարբեր երևույթներում, ուսանողների մոտ ձևավորել տեսական գիտելիքները փորձնականորեն կիրառելու հմտություններ
<b>Դասընթացի վերջնարդյունքները</b>	<b>Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.</b> 1. Վերլուծել քիմիական երևույթների հիմնապատճառները և դրանց դերն ու կարևորությունը շրջակա միջավայրում, բույսերում ու կենդանի օրգանիզմներում տեղի ունեցող կենսական նշանակության պրոցեսներում: 2. Ներկայացնել շրջակա միջավայրում քիմիական նյութերի ֆունկցիոնալ ազդեցության և դրանց քիմիական հատկությունների միջև փոխկապակցվածությունը: 3. Տեսական գիտելիքները կիրառել գործնական խնդիրների լուծման համար: 4. Ստացած գիտելիքները օգտագործել շրջակա միջավայրում ընթացող քիմիական պրոցեսները նկարագրելու համար:
<b>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</b>	<b>Դասավանդման մեթոդներ՝</b> դասախոսություն, սեմինարներ, դիդակտիկ նյութերի քննարկում, լաբորատոր և գործնական պարապմունքներ, փորձարարական աշխատանքներ  <b>Ուսումնառության մեթոդներ՝</b> ինտերակտիվ դասախոսություններ, լսարանային քննարկումներ, փորձարարական աշխատանքներ, մեթոդական ցուցումներ
<b>Գնահատման մեթոդները</b>	Բանավոր հարցումներ, լաբորատոր աշխատանքների հանձնում, ինքնուրույն աշխատանքներ, թեստային առաջադրանքներ

**Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ**

Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Ազրոնոմիա, սելեկցիա և գենետիկա
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	<b>Բույսերի գենետիկա</b>
Դասընթացի տեսակը	<input checked="" type="checkbox"/> Պարտադիր <input type="checkbox"/> Կամընտրային
Անցկացման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	5
Դասընթացի անցկացման կիսամյակը	3-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Առարկան տրամաբանորեն փոխկապակցված է «Բույսերի ֆիզիոլոգիա» առարկայի հետ:
Դասընթացի նպատակը	Ուսանողի մոտ ձևավորել կենսաբանական համակարգերի մոլեկուլյար, բջջային, օրգանիզմային, պոպուլյացիոն մակարդակի վրա ժառանգական տեղեկատվության պահպանման, փոխանցման և իրագործման գործընթացների գիտական աշխարհայացք, ծանոթացնել ժամանակակից գենետիկայի հիմնական խնդիրներին, հետազոտման մեթոդներին, հատկանիշների ժառանգման բնույթին, բուսական օրգանիզմների սերունդների վերարտադրման բազմազան եղանակներին, մեթոդներին, գյուղատնտեսական մշակաբույսերի քանակական և որակական հատկանիշների ժառանգման բնույթին, դրանց դրսևորումներին:
Դասընթացի վերջնարդյունքները	<b>Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.</b> 1. Ներկայացնել ժառանգականության բջջաբանական, մոլեկուլյար հիմունքները, ժառանգականության քրոմոսոմային տեսությունը, բջջային և գենային ինժեներիայի հիմունքները, գենետիկորեն մոդիֆիկացված գյուղատնտեսական մշակաբույսերը: 2. Կատարել հիբրիդոլոգիական վերլուծություն գյուղատնտեսական պրակտիկայում: 3. Կիրառել ժամանակակից գենետիկայի հիմնարար գիտելիքները գյուղատնտեսական տարբեր ոլորտներում, նաև այլ մասնագիտությունների ուսումնասիրությունների ժամանակ: 4. Իրականացնել գենետիկական հետազոտություններ: 5. Կատարել մշակաբույսերի գենոտիպավորում ըստ պոլիմորֆ սպիտակուցների մի շարք լոկուսների:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	<b>Դասավանդման մեթոդներ՝</b> նյութի բացատրություն պասիվ, ակտիվ և ինտերակտիվ մեթոդներով, տեսական թեմաների մեկնաբանում, ինքնուրույն աշխատանքի կատարում  <b>Ուսումնառության մեթոդներ՝</b> էլեկտրոնային սարքերի, աղյուսակների, ինտերակտիվ գործիքների կիրառում,

	բացատրական-ցուցադրական մեթոդի կիրառում, խմբակային կամ անհատական մտազրոհ, քննարկումներ, տեսաֆիլմերի դիտում և քննարկում, ինքնուրույն կամ թիմային աշխատանքների կատարում
<b>Գնահատման մեթոդները</b>	Ինքնուրույն աշխատանքի ներկայացում, միջանկյալ և ամփոփիչ քննություններ, թեստեր

**Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ**

<b>Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)</b>	Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա
<b>Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)</b>	
<b>Դասընթացի անվանումը</b>	<b>Բույսերի ֆիզիոլոգիա</b>
<b>Դասընթացի տեսակը</b>	<input checked="" type="checkbox"/> Պարտադիր <input type="checkbox"/> Կամընտրային
<b>Անցկացման լեզուն</b>	Հայերեն
<b>Կրեդիտները (ECTS)</b>	4
<b>Դասընթացի անցկացման կիսամյակը</b>	3-րդ կիսամյակ
<b>Մուտքային պահանջներ</b>	Առարկան տրամաբանորեն փոխկապակցված է «Բույսերի գենետիկա», «Ընդհանուր քիմիա» առարկաների հետ:
<b>Դասընթացի նպատակը</b>	Ուսանողների մոտ ձևավորել գիտելիքներ բուսական օրգանիզմում տեղի ունեցող ֆիզիոլոգիական գործընթացների բնույթի, այդ գործընթացների կարգավորման մեխանիզմների և շրջակա միջավայրի հետ փոխհարաբերությունների հիմնական օրինաչափությունների վերաբերյալ, ինչպես նաև տարբեր պայմաններում բույսի աճի և զարգացման, բերքի ձևավորման և որակի վերահսկման կարողություններ:
<b>Դասընթացի վերջնարդյունքները</b>	<p><b>Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>Ներկայացնել բուսական բջջի ֆիզիոլոգիական առանձնահատկությունները և ֆիզիոլոգիական գործընթացների մոլեկուլյար հիմունքները:</li> <li>Վերլուծել օրգանիզմի շնչառության և հանքային սննդառության առանձնահատկությունները, բույսի աճման և զարգացման գործընթացները:</li> <li>Մեկնաբանել արտաքին միջավայրի գործոնների ազդեցության բնույթը բույսի հիմնական կենսական գործընթացների վրա:</li> <li>Տեսական գիտելիքների հիման վրա կատարել եզրակացություններ և հետևություններ:</li> <li>Կիրառել տեսական և գործնական գիտելիքները գյուղատնտեսական պրակտիկայում:</li> </ol>

<p><b>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</b></p>	<p><b>Դասավանդման մեթոդներ՝</b> նյութի բացատրություն, որի ժամանակ կիրառվում են պասիվ, ակտիվ և ինտերակտիվ մեթոդները, տեսական թեմաների մեկնաբանում</p> <p><b>Ուսումնառության մեթոդներ՝</b> էլեկտրոնային սարքերի, աղյուսակների, ինտերակտիվ գործիքների կիրառում, բացատրական-ցուցադրական մեթոդի կիրառում, խմբակային կամ անհատական մտազրոհ, քննարկումներ, տեսաֆիլմերի դիտում և քննարկում, ինքնուրույն կամ թիմային աշխատանքների կատարում</p>
<p><b>Գնահատման մեթոդները</b></p>	<p>Ինքնուրույն աշխատանքի ներկայացում, միջանկյալ և ամփոփիչ քննություններ, թեստեր</p>

<p><b>Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ</b></p>	
<p><b>Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)</b></p>	<p>Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա</p>
<p><b>Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)</b></p>	
<p><b>Դասընթացի անվանումը</b></p>	<p><b>Բույսերի կենսաքիմիա</b></p>
<p><b>Դասընթացի տեսակը</b></p>	<p><input checked="" type="checkbox"/> Պարտադիր <input type="checkbox"/> Կամընտրային</p>
<p><b>Անցկացման լեզուն</b></p>	<p>Հայերեն</p>
<p><b>Կրեդիտները (ECTS)</b></p>	<p>3</p>
<p><b>Դասընթացի անցկացման կիսամյակը</b></p>	<p>3-րդ կիսամյակ</p>
<p><b>Մուտքային պահանջներ</b></p>	<p>Առարկան տրամաբանորեն փոխկապակցված է «Բույսերի ֆիզիոլոգիա», «Ընդհանուր քիմիա» առարկաների հետ:</p>
<p><b>Դասընթացի նպատակը</b></p>	<p>Հիմնարար գիտելիքներ հաղորդել մշակաբույսի կենսամոլեկուլների կառուցվածքային և ֆունկցիոնալ առանձնահատկությունների, նյութաէներգետիկ փոխանակության և դրա վրա շրջակա միջավայրի ազդեցության վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել մշակաբույսը, շրջակա միջավայրի բաղադրիչները կենսաքիմիական արդի մեթոդներով և սարքավորումներով գնահատելու կարողություն:</p>
<p><b>Դասընթացի վերջնարդյունքները</b></p>	<p><b>Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>Ներկայացնել բույսի կենսամոլեկուլների կառուցվածքը, ֆունկցիաները, երկրորդային ծագման բուսական մետաբոլիտները, դրանց կիրարկման հնարավորությունները:</li> <li>Մեկնաբանել բուսական օրգանիզմի նյութափոխանակությունը, էկոհամակարգի ազդեցությունը փոխանակային գործընթացների վրա, և այդ համատեքստում ֆերմենտների դերակատարման հիմնահարցերը:</li> </ol>

	<p>3. Գնահատել մշակաբույսը և շրջակա միջավայրի բաղադրիչները կենսաքիմիական մեթոդներով և արդի սարքավորումներով:</p> <p>4. Կիրառել ստացված կենսաքիմիական գիտելիքներն ու կարողությունները մասնագիտական ոլորտում ծագած խնդիրները լուծելու նպատակով:</p> <p>5. Ձևավորել թիմային աշխատանք կատարելու, կենսաքիմիական հանգուցային գաղափարները մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը վերծանելու կարողություն:</p>
<b>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</b>	<p><b>Դասավանդման մեթոդներ՝</b> նյութի բացատրություն պասիվ, ակտիվ և ինտերակտիվ մեթոդներով, տեսական թեմաների մեկնաբանում</p> <p><b>Ուսումնառության մեթոդներ՝</b> էլեկտրոնային սարքերի, աղյուսակների, ինտերակտիվ գործիքների կիրառում, բացատրական-ցուցադրական մեթոդի կիրառում, խմբակային կամ անհատական մտազրոհ, քննարկումներ, տեսաֆիլմերի դիտում և քննարկում, ինքնուրույն կամ թիմային աշխատանքների կատարում</p>
<b>Գնահատման մեթոդներ</b>	Ինքնուրույն աշխատանքի ներկայացում, միջանկյալ և ամփոփիչ քննություններ, թեստեր

Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
<b>Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)</b>	Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա
<b>Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)</b>	
<b>Դասընթացի անվանումը</b>	<b>Հողագիտություն</b>
<b>Դասընթացի տեսակը</b>	<input checked="" type="checkbox"/> Պարտադիր <input type="checkbox"/> Կամընտրային
<b>Դասավանդման լեզուն</b>	Հայերեն
<b>Կրեդիտները (ECTS)</b>	5
<b>Դասընթացի անցկացման կիսամյակը</b>	3-րդ կիսամյակ
<b>Մուտքային պահանջներ</b>	Դասընթացը տրամաբանորեն փոխկապակցված է «Բուսաբանություն», «Ընդհանուր քիմիա» առարկաների հետ:
<b>Դասընթացի նպատակը</b>	Ուսանողներին ծանոթացնել հողերի առաջացմանը և զարգացմանը, հողերի ու հող առաջացնող մայրատեսակների հանքաբանական ու մեխանիկական կազմին, հողի մորֆոլոգիական (ձևաբանական), կլանողականության, ֆիզիկական ու մեխանիկական հատկություններին, հողային լուծույթի ռեակցիային, հողագոյացման գործընթացին ու դրա գործոններին, հողի

	<p>օրգանական մասի՝ հումուսի գյուղատնտեսական նշանակությանը, հողային ռեժիմների ձևավորմանն ու դրանց կարգավորմանը, հողերի ծագման, կարգաբանման, աշխարհագրական տեղաբաշխման և գյուղատնտեսական օգտագործմանը, հիմնական հողատիպերին և հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը:</p>
<b>Մուտքային պահանջներ</b>	Դասընթաց տրամաբանորեն փոխկապակցված է «Երկրագործություն», «Բուսաբուծություն», «Բույսերի ֆիզիոլոգիա կենսաքիմիայի հիմունքներով», «Մարգագետնաբուծություն կերարտադրության հիմունքներով» առարկաների հետ:
<b>Դասընթացի նպատակը</b>	Ուսանողներին գիտելիքներ հաղորդել գյուղատնտեսական տարբեր կենդանիների և թռչունների կենսաբանական և օգտակար հատկանիշների և պահվածքի կազմակերպման, ինչպես նաև անասնաբուծությունում գիտականորեն հիմնավորված նորարարությունների հիման վրա կենդանիներից ստացվող լավորակ մթերքների և հումքի արտադրությունը ճիշտ կազմակերպելու համապատասխան տեխնոլոգիաների ու գործառույթների վերաբերյալ:
<b>Դասընթացի վերջնարդյունքները</b>	<b>Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.</b>

<b>(մինչև 6)</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Ներկայացնել գյուղատնտեսական կենդանիների և թռչունների դերը ժողովրդական տնտեսությունում և պարենային արտադրության առաջնահերթությունների համատեքստում:</li> <li>2. Ներկայացնել տարբեր տեսակի գյուղատնտեսական կենդանիների ցեղատեսակները՝ տարբերակելով դրանց մթերատվության ուղղությունները:</li> <li>3. Իրականացնել կենդանական ծագման մթերքների արտադրությանը միտված գործառույթները:</li> <li>4. Կազմել բուսական ծագման կերատեսակներից լիարժեք և հաշվեկշռված կերաբաժիններ՝ մթերատվությունը և սերնդատվությունը կարգավորելու նպատակով:</li> <li>5. Կազմակերպել և իրականացնել անասնաբուծությունում կիրառվող հիմնական գործառույթները՝ կենդանիների կերակրում, պահվածք, խնամք, բուծում, մթերքի և հումքի ստացման տեխնոլոգիաների գործարկում:</li> </ol>
<b>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</b>	<p><b>Դասավանդման մեթոդներ՝</b> դասախոսություններ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, համակարգչային ցուցադրություն Power Point տարբերակով, թեմատիկ քննարկումներ, «ֆորմատիվ հարցումներ», գործնական պարապմունքներ</p> <p><b>Ուսումնառության մեթոդներ՝</b> դասախոսությունների ունկնդրում, գործնական և ինքնուրույն աշխատանքների կատարում, ուսումնամեթոդական գրականության ուսումնասիրում</p>
<b>Գնահատման մեթոդները</b>	Գրավոր և բանավոր քննություններ, ինքնուրույն և խմբային աշխատանքներ

<b>Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ</b>	
<b>Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)</b>	Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա
<b>Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)</b>	
<b>Դասընթացի անվանումը</b>	<b>Մելիորացիայի հիմունքներ</b>
<b>Դասընթացի տեսակը</b>	<input checked="" type="checkbox"/> Պարտադիր <input type="checkbox"/> Կամընտրային
<b>Անցկացման լեզուն</b>	Հայերեն
<b>Կրեդիտները (ECTS)</b>	3
<b>Դասընթացի անցկացման կիսամյակը</b>	7-րդ կիսամյակ
<b>Մուտքային պահանջներ</b>	Դասընթացը տրամաբանորեն փոխկապակցված է «Հողագիտություն», «Երկրագործություն», «Ագրոէկոլոգիա» առարկաների հետ:

<p><b>Դասընթացի նպատակը</b></p>	<p>Ուսանողներին գիտելիքներ հաղորդել մեխորատիվ համակարգերի և ջրատնտեսական օբյեկտների նախագծման, կառուցման և շահագործման վերաբերյալ, ծանոթացնել տարբեր տիպի մեխորացիաների նշանակության, կիրառման պայմանների, հաշվարկման ու նախագծման տեխնոլոգիաների, գյուղատնտեսական հողատեսքերի բերրիության բարձրացման և շրջակա միջավայրի ազրոէկոլոգիական հավասարակշռության պահպանման գործին, տրամադրել գործնական և կիրառական հմտություններ մեխորատիվ կառուցվածքների, ոռոգման ու չորացման համակարգերի շահագործման, պահպանման, նոր տեխնոլոգիաների ներդրման բնագավառներում:</p>
<p><b>Դասընթացի վերջնարդյունքները</b></p>	<p><b>Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ներկայացնել ՀՀ ջրային ռեսուրսները, քանակական և որակական տեղաբաշխվածությունը, ջրային պաշարների բնութագրերը, մեխորացիայի տեսակներն ու դրանց կիրառման պայմանները, ազդեցության հետևանքները:</li> <li>2. Ներկայացնել գյուղատնտեսական մշակաբույսերի ջրման եղանակներն ու տեխնիկան, ջրախնայողական տեխնոլոգիաները:</li> <li>3. Բացատրել ոռոգման ջրանցքների հաշվարկային ծախսերի, ջրաթողունակության սահմանման եղանակները, լայնական հատվածքի կոնստրուկցիաները:</li> <li>4. Ներկայացնել ոռոգման բաց, փակ և կոմբինացված ցանցերը, դրանց կառուցվածքը:</li> <li>5. Ներկայացնել գերխոնավացած, ճահճացած և աղակալած հողերի մեխորացիայի եղանակները, հողերի էրոզիայի դեմ պայքարի միջոցառումները:</li> <li>6. Ներկայացնել հողերի աղակալման, գերխոնավացման, ճահճացման և անապատացման դեմ պայքարի միջոցառումների մեթոդները, հողերի բերրիության բարձրացման և բնապահպանական տեսանկյունից:</li> </ol>
<p><b>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</b></p>	<p><b>Դասավանդման մեթոդներ`</b> մտազրոհ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, գործնական աշխատանքի բացատրություն, համառոտ միտք, հարց ու պատասխան, ուսումնամեթոդական գրականության օգտագործում, մասնակցություն գործնական աշխատանքներին, ինքնուրույն կամ անհատական աշխատանքների կատարում</p> <p><b>Ուսումնառության մեթոդներ`</b> դասախոսությունների ունկնդրում, գործնական և ինքնուրույն աշխատանքների կատարում, ուսումնամեթոդական գրականության ուսումնասիրում</p>
<p><b>Գնահատման մեթոդները</b></p>	<p>Ինքնուրույն աշխատանքի ներկայացում, միջանկյալ և ամփոփիչ քննություններ, թեստեր</p>

Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	<b>Տնկարանային գործ</b>
Դասընթացի տեսակը	<input checked="" type="checkbox"/> Պարտադիր <input type="checkbox"/> Կամընտրային
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	3
Դասընթացի անցկացման կիսամյակը	7-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Դասընթացը տրամաբանորեն փոխկապակցված է «Պտղահատապտուղների և խաղողի սորտագիտություն», «Ագրոքիմիա», «Էնտոմոլոգիա» առարկաների հետ:
Դասընթացի նպատակը	Ուսանողներին ծանոթացնել տնկարանի դերին ու նշանակությանը, բազմացման ձևերը, տնկանյութի աճեցման տեխնոլոգիան, կիրառվող պատվաստակալները ըստ պտղատեսակների, տնկանյութի ապրոբացիայի գործընթացը, ստանդարտ տնկանյութի չափորոշիչները:
Դասընթացի վերջնարդյունքները	<p><b>Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ներկայացնել սերտիֆիկացված սեփականարմատ (յուրարմատ) և ոչ սեփականարմատ (պատվաստված) տնկանյութի արտադրության տեխնոլոգիաներ:</li> <li>2. Նախագծել ինտենսիվ տնկարանի սխեմաներ և մշակության ինովացիոն համակարգեր:</li> <li>3. Իրականացնել տարբեր պտղահատապտղային տեսակների տնկանյութի արտադրություն՝ կախված գյուղատնտեսական գոտիներից:</li> <li>4. Վերլուծել մաքրասորտ, վիրուսազերծ տնկանյութի արտադրությունը:</li> <li>5. Կատարել կանխատեսումներ, ներկայացնել առաջարկություններ ապրոբացված տնկանյութի վերաբերյալ:</li> <li>6. Գնահատել տնկանյութի արտադրության գործընթացում մայրուտային այգիների առկայության անհրաժեշտությունը, բազմացման և ձևավորման բաժիններում կիրառվող միջոցառումների, տեխնոլոգիական քայլերի կատարման ճշգրտությունը:</li> </ol>
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	<p><b>Դասավանդման մեթոդներ՝</b> մտագրոհ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, ֆորմատիվ հարցումներ, համառոտ միտք, հարց ու պատասխան</p> <p><b>Ուսումնառության մեթոդներ՝</b> ռեֆերատների պատրաստում և ներկայացում, ուսումնամեթոդական գրականության ուսումնասիրում, մասնակցություն պրակտիկաներին և հաշվետվությունների կազմում, մասնակցություն գործնական</p>

	աշխատանքներին, ինքնուրույն կամ անհատական աշխատանքների կատարում
<b>Գնահատման մեթոդները</b>	Գրավոր և բանավոր քննություններ, ինքնուրույն և խմբային աշխատանքներ

Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
<b>Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)</b>	Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա
<b>Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)</b>	
<b>Դասընթացի անվանումը</b>	<b>Ագրոնոմիական հետազոտությունների մեթոդիկա</b>
<b>Դասընթացի տեսակը</b>	<input checked="" type="checkbox"/> Պարտադիր <input type="checkbox"/> Կամընտրային
<b>Դասավանդման լեզուն</b>	Հայերեն
<b>Կրեդիտները (ECTS)</b>	4
<b>Դասընթացի անցկացման կիսամյակը</b>	7-րդ կիսամյակ
<b>Մուտքային պահանջներ</b>	Դասընթացը տրամաբանորեն փոխկապակցված է «Ագրոոդերևույթաբանություն», «Երկրագործություն» և «Ագրոէկոլոգիա և շրջ. միջ. պահպանություն» առարկաների հետ:
<b>Դասընթացի նպատակը</b>	Ծանոթացնել ագրոնոմիական հետազոտություններին, դրանց կատարման մեթոդներին, պլանավորման և իրականացման բոլոր պահանջներին, որոնք հնարավորություն կտան հնարավորինս ճիշտ կատարել ինքնուրույն հետազոտություններ և ստանալ հավաստի տվյալներ, իրականացնել տվյալների վերլուծություն, մաթեմատիկական (վիճակագրական) մշակում, ճիշտ ներկայացնել կատարված հետազոտությունը՝ հիմնվելով հաշվարկված վիճակագրական ցուցանիշների վրա՝ միջին թվաբանական, դիսպերսիա, ստանդարտային շեղում, վարիացիայի գործակից, միջին թվաբանականի սխալ:
<b>Դասընթացի վերջնադրյունքները</b>	<b>Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.</b>

	<ol style="list-style-type: none"> <li>1. Տարբերակել ագրոնոմիական հետազոտությունները, պլանավորել դրանք՝ հիմնվելով առաջ քաշված հիպոթեզի վրա:</li> <li>2. Կիրառել փորձահողամասում ագրոնոմիական փորձերի տարբերակների տեղադրման և փորձի կատարման մեթոդները:</li> <li>3. Կատարել ճշգրիտ դիտումներ և հաշվառումներ:</li> <li>4. Նախնական մշակման ենթարկել փորձերից ստացված տվյալները:</li> <li>5. Վերլուծել տարբեր փորձերից ստացված տվյալները դիսպերսիոն անալիզի, ինչպես նաև վիճակագրական մշակման այլ մեթոդներով:</li> </ol>
<b>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</b>	<p><b>Դասավանդման մեթոդներ՝</b> մտազրոհ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, գործնական աշխատանքի բացատրություն, ֆորմատիվ հարցումներ, համառոտ միտք, հարց ու պատասխան, ուսումնամեթոդական գրականության օգտագործումը, մասնակցություն գործնական աշխատանքներին, ինքնուրույն կամ անհատական աշխատանքների կատարում</p> <p><b>Ուսումնառության մեթոդներ՝</b> դասախոսությունների ունկնդրում, գործնական և ինքնուրույն աշխատանքների կատարում, ուսումնամեթոդական գրականության ուսումնասիրում</p>
<b>Գնահատման մեթոդները</b>	Ինքնուրույն աշխատանքի ներկայացում, միջանկյալ և ամփոփիչ քննություններ, թեստեր

Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
<b>Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)</b>	Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա
<b>Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)</b>	
<b>Դասընթացի անվանումը</b>	<b>Սերմնաբուծություն</b>
<b>Դասընթացի տեսակը</b>	<input checked="" type="checkbox"/> Պարտադիր <input type="checkbox"/> Կամընտրային
<b>Դասավանդման լեզուն</b>	Հայերեն
<b>Կրեդիտները (ECTS)</b>	4

<b>Դասընթացի անցկացման կիսամյակը</b>	7-րդ կիսամյակ
<b>Մուտքային պահանջներ</b>	Դասընթացը տրամաբանորեն փոխկապակցված է «Ֆիտոպաթոլոգիա», «Դաշտային և բանջարային բույսերի սորտագիտություն», «Մարգագետնաբուծություն կերարտադրության հիմունքներով» առարկաների հետ:
<b>Դասընթացի նպատակը</b>	Ուսուցանել սերմնանյութի բնութագրական հասկացությունները, սորտային և ցանքային որակական ցուցանիշները և վերարտադրության ընթացքում այդ ցուցանիշների փոփոխությունների պատճառները, սերմնաբուծության կազմակերպման, սորտաթարմացման և սորտափոխության գործընթացները, էլիտային, տարբեր վերարտադրության սերմերի արտադրության և արդյունաբերական սերմնաբուծության կազմակերպման ժամանակակից տեխնոլոգիաները
<b>Դասընթացի վերջնարդյունքները</b>	<p><b>Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ներդնել սերմնաբուծության կազմակերպման ժամանակակից տեխնոլոգիաները գյուղացիական և ֆերմերային սերմնաբուծական տնտեսություններում:</li> <li>2. Իրականացնել սորտային սերմերի պահանջի հաշվարկներ և սերմերի արտադրություն:</li> <li>3. Մեկնաբանել սորտաթարմացման և սորտափոխության գործընթացների անցկացման պահանջները:</li> <li>4. Մեկնաբանել սերմնանյութի բնութագրական հասկացությունները, սորտային և ցանքային որակական ցուցանիշները, վերարտադրության ընթացքում այդ ցուցանիշների փոփոխությունների պատճառները:</li> <li>5. Հիմնավորել սորտաթարմացման և սորտափոխության գործընթացների անցկացման պահանջները:</li> <li>6. Կազմակերպել էլիտային և տարբեր վերարտադրության սերմերի արտադրություն, կատարելով ապրոբացիոն աշխատանքներ:</li> </ol>
<b>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</b>	<p><b>Դասավանդման մեթոդներ`</b> մտազրոհ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, գործնական աշխատանքի բացատրություն, «ֆորմատիվ հարցումներ», համառոտ միտք, հարց ու պատասխան, ուսումնամեթոդական գրականության օգտագործումը, մասնակցությունը գործնական աշխատանքներին, ինքնուրույն կամ անհատական աշխատանքների կատարումը</p> <p><b>Ուսումնառության մեթոդներ`</b> դասախոսությունների ունկնդրում, գործնական և ինքնուրույն աշխատանքների կատարում, ուսումնամեթոդական գրականության ուսումնասիրում</p>
<b>Գնահատման մեթոդները</b>	Ինքնուրույն աշխատանքի ներկայացում, միջանկյալ և ամփոփիչ քննություններ

**Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ**

Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	<b>Ջրային և հողային ռեսուրսների կառավարում</b>
Դասընթացի տեսակը	<input type="checkbox"/> Պարտադիր <input checked="" type="checkbox"/> Կամընտրային
Անցկացման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	3
Դասընթացի անցկացման կիսամյակը	7-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Դասընթացը տրամաբանորեն փոխկապակցված է «Երկրագործություն», «Բուսաբուծություն», «Բանջարաբուծություն» և «Պտղաբուծություն», «Խաղողագործություն», «Մարգագետնաբուծություն կերարտադրության հիմունքներով» և «Մելիորացիայի հիմունքներ» առարկաների հետ:
Դասընթացի նպատակը	Ուսանողներին հիմնարար գիտելիքներ փոխանցել հողաբարելավման, հողային և ջրային պաշարների կայուն օգտագործման և պահպանման քաղաքականության վարման, կառավարման, տնօրինման, տիրապետման գործառույթների գործնական դրույթների վերաբերյալ:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6)	<p><b>Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>Կիրառել հիդրոտեխնիկական կառուցվածքների, ոռոգման, չորացման, ջրամատակարարման, ջրաբխացման համակարգերի, պոմպակայանների գործարկման առաջավոր մեթոդները:</li> <li>Կիրառել նորարական առաջավոր տեխնոլոգիաները գյուղատնտեսական տարբեր հողատեսքերի դեգրադացիայի չեզոքության պահպանման և ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման գործառույթներում:</li> <li>Հավաքագրել և մեկնաբանել ջրատնտեսական համակարգերի արդյունավետ և անխափան աշխատանքի բարելավմանը վերաբերող քանակական և որակական տվյալներ:</li> <li>Կատարել դատողություններ գոյություն ունեցող արդյունավետ հիդրոտեխնիկական կառուցվածքների, գյուղատնտեսական մշակաբույսերի ջրման եղանակների և գյուղատնտեսական հողատեսքերի կառավարման վերաբերյալ:</li> <li>Գնահատել հողային և ջրային պաշարների առկա հնարավորությունները գյուղատնտեսական մշակաբույսերի շրջանացման և ջրօգտագործման գործընթացում:</li> </ol>

	6. Յուցաբերել կարողություններ հողաբարելավման, հողային և ջրային պաշարների կայուն օգտագործման, պահպանման գործընթացում առկա խոչընդոտները և խնդիրները բացահայտելու և լուծումներ տալու գործում:
<b>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</b>	<b>Դասավանդման մեթոդներ՝</b> դասախոսություններ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, քննարկում, «ֆորմատիվ հարցումներ», «համառոտ միտք», «հարց ու պատասխան» <b>Ուսումնառության մեթոդներ՝</b> գործնական, անհատական և ինքնուրույն աշխատանքների կատարում, ուսումնամեթոդական գրականության ուսումնասիրում
<b>Գնահատման մեթոդները</b>	Գրավոր և բանավոր քննություններ, ինքնուրույն և խմբային աշխատանքներ

<b>Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ</b>	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա
<b>Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)</b>	
<b>Դասընթացի անվանումը</b>	<b>Հիդրոպոնիկ համակարգեր</b>
<b>Դասընթացի տեսակը</b>	<input type="checkbox"/> Պարտադիր <input checked="" type="checkbox"/> Կամընտրային
<b>Անցկացման լեզուն</b>	Հայերեն
<b>Կրեդիտները (ECTS)</b>	3
<b>Դասընթացի անցկացման կիսամյակը</b>	7-րդ կիսամյակ
<b>Մուտքային պահանջներ</b>	Դասընթացը տրամաբանորեն փոխկապակցված է «Բույսերի կենսատեխնոլոգիա» և «Ագրոքիմիա» առարկաների հետ:
<b>Դասընթացի նպատակը</b>	Ուսանողներին տեսական և կիրառական գիտելիքներ հաղորդել բույսերի անհող մշակության (առանց հողագրունտի առկայության) սկզբունքներին, դրանց առավելություններին, զարգացման հեռանկարներին, ծանոթացնել բույսերի սննդառությունն ապահովող սննդարար լուծույթների այն բազմազանությանը, որոնք անհրաժեշտ են այս կամ այն բուսատեսակի բնականոն աճն ու զարգացումն ապահովելու համար: Ներկայացնել սննդարար լուծույթների որակական և քանակական կազմը, սպասվող անցանկալի հետևանքները, որոնք կարող են դիտվել այդ սկզբունքների խախտման դեպքում: Ներկայացնել հիդրոպոնիկայում օգտագործվող սննդարար լուծույթի պարամետրերի կարգավորման այն սկզբունքներն ու մեթոդները, որոնց կիրառման միջոցով հնարավոր է ապահովել բուսատեսակների նորմալ աճը:
<b>Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6)</b>	<b>Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.</b>

	<ol style="list-style-type: none"> <li>1. Գործարկել բույսերի անհող մշակության տեխնոլոգիաները ջրային (հիդրոպոնիկ) և օդային (աերոպոնիկ) միջավայրերում:</li> <li>2. Ներկայացնել հիդրոպոնիկ մշակության արդյունավետ սննդամիջավայրերը, որոնք հաջողությամբ կարող են կիրառվել ջերմատանը և ապահովել բարձր արդյունավետություն:</li> <li>3. Պատրաստել տարբեր մշակաբույսերի համար կիրառվող սննդարար լուծույթներ:</li> <li>4. Կառավարել ջերմատան արդյունավետ շահագործումը:</li> <li>5. Կարգավորել հիդրոպոնիկ ջերմատան սննդարար լուծույթի պարամետրերը բույսերի աճի ու զարգացման տարբեր փուլերի համար՝ կախված մշակվող բուսատեսակից:</li> </ol>
<b>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</b>	<p><b>Դասավանդման մեթոդներ՝</b> ինտերակտիվ դասախոսություն, նյութի վերլուծություն, քննարկումների, բանավեճերի վարում, ուսուցողական ֆիլմերի, տեսանյութերի դիտում բացատրական-ցուցադրական, արտալսարանային դասախոսություններ, կլոր սեղան, թիմային աշխատանք, մտազրոհ</p> <p><b>Ուսումնառության մեթոդներ՝</b> դասախոսության ունկնդրում, ուսումնամեթոդական և էլեկտրոնային գրականության ուսումնասիրություն, մասնագիտական տեսանյութերի և հեռուստահաղորդումների դիտում, ինքնուրույն աշխատանքների կատարում</p>
<b>Գնահատման մեթոդները</b>	Թեստ, ինքնուրույն աշխատանքի գնահատում

Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
<b>Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)</b>	Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա
<b>Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)</b>	
<b>Դասընթացի անվանումը</b>	<b>Մարքեթինգ և մենեջմենթ</b>
<b>Դասընթացի տեսակը</b>	<input checked="" type="checkbox"/> Պարտադիր
<b>Դասավանդման լեզուն</b>	Հայերեն
<b>Կրեդիտները (ECTS)</b>	3_ կրեդիտ
<b>Դասընթացի անցկացման կիսամյակը</b>	8-րդ կիսամյակ
<b>Մուտքային պահանջներ</b>	Առարկան ն տրամաբանորեն փոխկապակցված է «Գյուղ. էկոնոմիկա», «Հասարակագիտություն» առարկաների հետ:
<b>Դասընթացի նպատակը</b>	Ուսանողների մոտ ձևավորել անհրաժեշտ կոմպետենցիաներ, որոնց շնորհիվ նա կկարողանա կարևորել մարքեթինգի դերը կազմակերպության գործունեության մեջ, կկիրառի այն

	որպես կազմակերպության առջև դրված նպատակների նվաճման գործիք՝ առաջնորդվելով մրցակցային միջավայրի պայմաններում սպառողների պահանջմունքների բավարարման հարցերով:
<b>Դասընթացի վերջնարդյունքները</b>	<p><b>Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ներկայացնել մենեջմենթի և մարքեթինգի գործընթացի իրականացման տեսական, մեթոդաբանական հիմքերը, օրինաչափությունները և սկզբունքները:</li> <li>2. Բացատրել կառավարման և մարքեթինգի մեթոդների հիմնական տարբերությունները, յուրաքանչյուրի դերը կառավարման գործընթացում և կիրառման անհրաժեշտությունը:</li> <li>3. Թվարկել կառավարման և մարքեթինգի հիմնական և կոնկրետ գործառույթները:</li> <li>4. Նախագծել մարքեթինգի համալիրի տարրերը կազմակերպության համար:</li> <li>5. Օգտագործել ձեռք բերած տնտեսագիտական գիտելիքները, շահադրման և վերահսկողության գործուն մեխանիզմները:</li> <li>6. Իրականացնել կազմակերպության մարքեթինգային գործունեության կազմակերպումն ու կառավարումը:</li> <li>7. Իրականացնել մարքեթինգային հետազոտություններ և բենչմարքինգ:</li> </ol>
<b>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</b>	<p><b>Դասավանդման մեթոդներ՝</b> մտազրոհ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, գործնական աշխատանքի բացատրություն, ֆորմատիվ հարցումներ, համառոտ միտք, հարց ու պատասխան, ուսումնամեթոդական գրականության ուսումնասիրում, գործնական, ինքնուրույն և անհատական աշխատանքների կատարում</p> <p><b>Ուսումնառության մեթոդներ՝</b> մասնակցություն գործնական աշխատանքներին, ուսումնամեթոդական գրականության ուսումնասիրում, ինքնուրույն աշխատանքների կատարում</p>
<b>Գնահատման մեթոդները</b>	Ինքնուրույն աշխատանքի ներկայացում, միջանկյալ և ամփոփիչ քննություններ, թեստեր

<b>Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ</b>	
<b>Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)</b>	Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա
<b>Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)</b>	
<b>Դասընթացի անվանումը</b>	<b>Բույսերի կենսատեխնոլոգիա</b>
<b>Դասընթացի տեսակը</b>	<input checked="" type="checkbox"/> Պարտադիր <input type="checkbox"/> Կամընտրային

Անցկացման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	3
Դասընթացի անցկացման կիսամյակը	8-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Դասընթացը սերտորեն փոխկապակցված է «Բույսերի ֆիզիոլոգիա», «Բույսերի գենետիկա» առարկաների հետ:
Դասընթացի նպատակը	Ուսանողների մոտ ձևավորել գիտելիքներ գյուղատնտեսության մշակաբույսերի քանակական և որակական հատկանիշների ժառանգման բնույթի, դրանց դրսևորումների, բույսերի գենետիկական տրանսֆորմացիաների, գյուղատնտեսության մեջ կենսատեխնոլոգիական մոտեցումների և դրանց կիրառության մասին
Դասընթացի վերջնարդյունքները	<p><b>Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ներկայացնել ժամանակակից կենսատեխնոլոգիայի հիմնական սկզբունքները և ոլորտները, կիրառական նշանակությունը տնտեսության մեջ՝ գյուղատնտեսության, բժշկության և սննդարդյունաբերության:</li> <li>2. Իրականացնել աշխատանքներ կենսատեխնոլոգիական արտադրությունում, ինչպիսիք են ֆերմենտների արտադրությունը, մետաբոլիտների առաջնային և երկրորդային ստացումը, շրջակա միջավայրի հիմնախնդիրների լուծումը և այլն:</li> <li>3. Տարբերակել մոլեկուլային կենսաբանության տարբեր մեթոդները կենսատեխնոլոգիական և ախտաբանական լաբորատորիաներում կիրառելուն:</li> <li>4. Առաջարկել կենսատեխնոլոգիական հետազոտությունների կազմակերպման մոտեցումներ և ծրագրեր:</li> <li>5. Գնահատել կենսատեխնոլոգիային վերաբերող գիտական հոդվածներն ու հրատարակումները, առաջարկել այլընտրանքային մեկնաբանություններ ու համապատասխան հետազոտություններ:</li> </ol>
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	<p><b>Դասավանդման մեթոդներ՝</b> մտազրոհ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, գործնական աշխատանքի բացատրություն, ֆորմատիվ հարցումներ, համառոտ միտք, հարց ու պատասխան, ուսումնամեթոդական գրականության օգտագործումը, գործնական, ինքնուրույն կամ անհատական աշխատանքների կատարում</p> <p><b>Ուսումնառության մեթոդներ՝</b> մասնակցություն գործնական աշխատանքներին, ուսումնամեթոդական գրականության ուսումնասիրում, ինքնուրույն աշխատանքների կատարում</p>
Գնահատման մեթոդները	Ինքնուրույն աշխատանքի ներկայացում, միջանկյալ և ամփոփիչ քննություններ

Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ

Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	<b>Սելեկցիայի ընդհանուր հիմունքներ</b>
Դասընթացի տեսակը	<input checked="" type="checkbox"/> Պարտադիր <input type="checkbox"/> Կամընտրային
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	4
Դասընթացի անցկացման կիսամյակը	8-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Դասընթացը սերտորեն փոխկապակցված է «Պտղահատապտղատուների և խաղողի սորտագիտություն» առարկայից:
Դասընթացի նպատակը	Ուսանողներին գիտելիքներ հաղորդել մշակաբույսերի բերքատվության բարձրացման գենետիկական կենսաբանական հնարավորությունները օգտագործելու և գյուղատնտեսական արտադրության պահանջները բավարարող նոր սորտերի և հիբրիդների ստեղծման սկզբունքների վերաբերյալ
Դասընթացի վերջնարդյունքները	<p><b>Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>Ներկայացնել մշակաբույսերի սելեկցիայի ընդհանուր խնդիրները, մշակաբույսերի և դրանց վայրի ազգակիցների գենոֆոնդը, սելեկցիոն նոր ելանյութի և սորտերի ստեղծման մեթոդները:</li> <li>Նախագծել մշակաբույսերի ժամանակակից սորտերի ստեղծման մոդելը:</li> <li>Կիրառել սելեկցիայի գենետիկական մեթոդները, ստեղծել ժառանգական փոփոխականության բազմաթիվ ձևեր և կատարել արդյունավետ ընտրություն:</li> <li>Ստանալ նոր սորտ և հիբրիդ, կիրառելով սելեկցիոն գործընթացի արագացման ուղղիները:</li> <li>Ներկայացնել սելեկցիոն նյութի գնահատման մեթոդները նոր արժեքավոր սորտերի ստացման համար:</li> <li>Վերլուծել տվյալ մշակաբույսի սելեկցիայում առկա խնդիրներն ու դրանց լուծման ուղիները:</li> </ol>
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	<p><b>Դասավանդման մեթոդներ՝</b> դասախոսություններ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, համակարգչային ցուցադրություն Power Point տարբերակով, թեմատիկ քննարկումներ, «Ֆորմատիվ հարցումներ», գործնական պարապմունքներ</p> <p><b>Ուսումնառության մեթոդներ՝</b> դասախոսությունների ունկնդրում, մասնակցություն գործնական աշխատանքներին, ուսումնամեթոդական գրականության ուսումնասիրում, ինքնուրույն աշխատանքների կատարում</p>

<b>Գնահատման մեթոդները</b>	Ինքնուրույն աշխատանքի ներկայացում, միջանկյալ և ամփոփիչ քննություններ
----------------------------	----------------------------------------------------------------------

**Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ**

<b>Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)</b>	Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա
<b>Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)</b>	
<b>Դասընթացի անվանումը</b>	<b>Ագրոկենսաբազմազանություն</b>
<b>Դասընթացի տեսակը</b>	<input checked="" type="checkbox"/> Պարտադիր <input type="checkbox"/> Կամընտրային
<b>Դասավանդման լեզուն</b>	Հայերեն
<b>Կրեդիտները (ECTS)</b>	4
<b>Դասընթացի անցկացման կիսամյակը</b>	Ց-րդ կիսամյակ
<b>Մուտքային պահանջներ</b>	Դասընթացը սերտորեն փոխկապակցված է «Դաշտային և բանջարային բույսերի սորտագիտություն», «Մարգագետնաբուծություն կերարտադրության հիմունքներով» առարկաներից:
<b>Դասընթացի նպատակը</b>	Ուսանողներին ներկայացնել և պարզաբանել գյուղատնտեսական մշակաբույսերի՝ որպես գենետիկական հարուստ նյութի, ավելի արդյունավետ օգտագործման տեղական և միջազգային փորձը, այդ սորտերի ստացման տարաբնույթ ելանյութերի՝ այդ թվում՝ մշակովի բույսերի վայրի ազգակիցների կարևորությունը որպես բնական գենետիկական հարուստ ռեսուրս, ինչպես նաև բազմաթիվ վայրի ուտելի, համեմունքային բույսերի և դեղաբույսերի մշակության մեջ ներդնելու հիմնախնդիրները, մշակաբույսերի տեսակային կազմի բազմազանության խնդիրները:
<b>Դասընթացի վերջնարդյունքները</b>	<p><b>Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>Տարբերակել ՀՀ տարածքում հաշվառված և նկարագրված ագրոկենսառեսուրսները, դրանց առանձին օբյեկտների ներկա վիճակն ու հիմնական մշակաբույսերի ծագման առաջնային և երկրորդային գենետիկական կենտրոնները:</li> <li>Հիմնավորել մշակաբույսերի սորտերի ստացման տարաբնույթ ելանյութերի, այդ թվում՝ մշակաբույսերի վայրի ազգակիցների կարևորությունը որպես բնական գենետիկական հարուստ ռեսուրս:</li> <li>Մեկնաբանել ագրոկենսաբազմազանության պահպանությանն ու օգտագործմանն առընչվող միջազգային և տեղական իրավական դաշտը, դրանցից բխող խնդիրները ՀՀ-ում:</li> <li>Դասակարգել ագրոկենսառեսուրսների օբյեկտները, տալով դրանց ագրոնոմիական գնահատականը, դրանցից յուրա-</li> </ol>

	<p>քանցյուրի դերն ու տեղը ագրոկեսաբազմազանության պաշարում:</p> <p>5. Կիրառել էկոլոգիական և մարդաձին ռիսկերի մեղմմանը և հետևանքների վերացմանը ուղղված ագրոմիջոցառումների համալիրներ ագրոկենսաբազմազանության կայունությունն ու պահպանումն ապահովելու գործընթացներում:</p> <p>6. Գնահատել ագրոկենսաբազմազանության կայուն կառավարման առկա խնդիրների լուծման հնարավորություններն ու անհրաժեշտ ռեսուրսները:</p>
<b>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</b>	<p><b>Դասավանդման մեթոդներ՝</b> դասախոսություններ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, համակարգչային ցուցադրություն Power Point տարբերակով, թեմատիկ քննարկումներ, «ֆորմատիվ հարցումներ», գործնական պարապմունքներ</p> <p><b>Ուսումնառության մեթոդներ՝</b> դասախոսությունների ունկնդրում, մասնակցություն գործնական աշխատանքների ուսումնամեթոդական գրականության ուսումնասիրում, ինքնուրույն աշխատանքների կատարում</p>
<b>Գնահատման մեթոդները</b>	Ինքնուրույն աշխատանքի ներկայացում, միջանկյալ և ամփոփիչ քննություններ

Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
<b>Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)</b>	Ագրոնոմիա, սելեկցիա, գենետիկա
<b>Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)</b>	
<b>Դասընթացի անվանումը</b>	<b>Ֆինանսական պատրաստավածություն</b>
<b>Դասընթացի տեսակը</b>	<input checked="" type="checkbox"/> Պարտադիր <input type="checkbox"/> Կամընտրային
<b>Դասավանդման լեզուն</b>	Հայերեն
<b>Կրեդիտները (ECTS)</b>	3
<b>Դասընթացի անցկացման կիսամյակը</b>	8-րդ կիսամյակ
<b>Մուտքային պահանջներ</b>	Առարկան փոխկապակցված է «Մաթեմատիկա» առարկայի հետ:
<b>Դասընթացի նպատակը</b>	Ուսանողների մոտ ձևավորել տեսական և գործնական հիմնարար գիտելիքներ ֆինանսաների, ֆինանսական գործառնությունների մասին՝ զարգացնելով խելամիտ և տնտեսապես շահավետ ֆինանսական որոշումներ կայացնելու ունակությունները:
<b>Դասընթացի վերջնարդյունքները</b>	<b>Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.</b>

	<ol style="list-style-type: none"> <li>1. Ներկայացնել ֆինանսական հիմնական հասկացությունների էությունը և բովանդակությունը, փողի հիմնական գործառնությունները:</li> <li>2. Ընտրել համապատասխան ֆինանսական ծառայություններ՝ ֆինանսական խարդախություններից և զերծարարություններից խուսափելու համար:</li> <li>3. Բացատրել ֆինանսական որոշումների վրա ազդող գործոններին արձագանքելու արդյունավետ միջոցները:</li> <li>4. Մեկնաբանել եկամուտների ու ծախսերի համառոտ հաշվարկների սկզբունքները:</li> <li>5. Հիմնավորել ֆինանսական որոշումների կայացման արդյունավետությունը:</li> <li>6. Գնահատել ֆինանսական ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության հավաստիության աստիճանը:</li> </ol>
<b>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</b>	<p><b>Դասավանդման մեթոդներ՝</b> դասախոսություններ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, քննարկում, լուսապատկեր, տեսաֆիլմի ցուցադրում, ուսումնական շրջայցեր ֆինանսական կազմակերպություն</p> <p><b>Ուսումնառության մեթոդներ՝</b> մասնակցություն գործնական աշխատանքների, ուսումնամեթոդական գրականության ուսումնասիրում, ինքնուրույն աշխատանքների կատարում, վարժություններ, թեստեր, քննարկումներ</p>
<b>Գնահատման մեթոդները</b>	Թեստային, ինքնուրույն աշխատանքների, առաջադրանքների (խմբային աշխատանք, գրավոր աշխատանք, էսսե) գնահատում

<b>Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ</b>	
<b>Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)</b>	Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա
<b>Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)</b>	
<b>Դասընթացի անվանումը</b>	<b>Վիրուսազերծ տնկանյութի ստացման և աճեցման տեխնոլոգիան</b>
<b>Դասընթացի տեսակը</b>	<input type="checkbox"/> Պարտադիր <input checked="" type="checkbox"/> Կամընտրային
<b>Անցկացման լեզուն</b>	Հայերեն
<b>Կրեդիտները (ECTS)</b>	3
<b>Դասընթացի անցկացման կիսամյակը</b>	8-րդ կիսամյակ
<b>Մուտքային պահանջներ</b>	Դասընթացը տրամաբանորեն փոխկապակցված է «Բույսերի կենսատեխնոլոգիա», «Տնկարանային գործ», «Բուսաբուծություն» «Պտղաբուծություն» և «Բանջարաբուծություն» առարկաների հետ:

<b>Դասընթացի նպատակը</b>	Ուսանողներին փոխանցել հիմնարար գիտելիքներ մշակաբույսերի վիրուսազերծ տնկանյութի ստացման, բազմացման, բաց դաշտի և ջերմատնային պայմաններում դրանց աճեցման տեսական և գործնական դրույթների վերաբերյալ:
<b>Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6)</b>	<p><b>Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ներկայացնել վիրուսային հիվանդությունների ախտորոշման և կլոնային միկրոբազմացման մեթոդները:</li> <li>2. Ներկայացնել վիրուսազերծ ելանյութի ստացման և in vitro կլոնավորման եղանակով բույսերի բազմացումը:</li> <li>3. Մեկնաբանել առանձին մշակաբույսերի վիրուսազերծ տնկանյութի ստացման, բազմացման և ջերմատնային պայմաններում աճեցման գործընթացները:</li> <li>4. Մշակել առանձին մշակաբույսերի վիրուսազերծ տնկանյութի ստացման, բազմացման և ջերմատնային պայմաններում աճեցման գործընթացները:</li> <li>5. Ստեղծել in vitro մշակույթի համար անհրաժեշտ պայմաններ (սննդարար միջավայր, ջուր, լույս):</li> <li>6. Կազմակերպել առանձին մշակաբույսերի վիրուսազերծ տնկանյութի աճեցումը ջերմատնային պայմաններում:</li> </ol>
<b>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</b>	<p><b>Դասավանդման մեթոդներ՝</b> դասախոսություններ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, քննարկում, տեսաֆիլմի ցուցադրում,</p> <p><b>Ուսումնառության մեթոդներ՝</b> գործնական աշխատանքների մասնակցություն, ուսումնամեթոդական գրականության ուսումնասիրում:</p> <p>Ինքնուրույն աշխատանքների կատարում: Վարժություններ, թեստեր, քննարկումներ:</p>
<b>Գնահատման մեթոդները</b>	Թեստային, ինքնուրույն աշխատանքների, առաջադրանքների (խմբային աշխատանք, գրավոր աշխատանք, էսսե) գնահատում

<b>Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ</b>	
<b>Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)</b>	Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա
<b>Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)</b>	
<b>Դասընթացի անվանումը</b>	<b>Ճշգրիտ գյուղատնտեսության հիմունքներ</b>
<b>Դասընթացի տեսակը</b>	<input type="checkbox"/> Պարտադիր <input checked="" type="checkbox"/> Կամընտրային
<b>Անցկացման լեզուն</b>	Հայերեն

<b>Կրեդիտները (ECTS)</b>	3
<b>Դասընթացի անցկացման կիսամյակը</b>	8-րդ կիսամյակ
<b>Մուտքային պահանջներ</b>	Դասընթացը սերտորեն փոխկապակցված է «Երկրագործություն», «Բուսաբուծություն», «Բույսերի ֆիզիոլոգիա կենսաքիմիայի հիմունքներով» և «Մարգագետնաբուծություն կերարտադրության հիմունքներով» առարկաների հետ:
<b>Դասընթացի նպատակը</b>	Հիմնարար գիտելիքներ հաղորդել ճշգրիտ գյուղատնտեսության տեսական հիմունքների և գործնական կիրառությունների վերաբերյալ՝ հիմնվելով ժամանակակից տեխնոլոգիաների վրա, ինչպիսիք են սենսորները, GPS/GIS համակարգերը, դրոնները, ագրոտեխնոլոգիական ծրագրերը: Զարգացնել մասնագիտական կարողություններ՝ տվյալների վերլուծության, դաշտային մոնիտորինգի և կայուն գյուղատնտեսական որոշումների կայացման ոլորտում:
<b>Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6)</b>	<b>Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա.</b> 1. Ներկայացնել ճշգրիտ գյուղատնտեսության գաղափարը և կարևորությունը: 2. Վերլուծել տվյալներ GPS, GIS և սենսորային համակարգերից: 3. Օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաներ (դրոններ, սենսորներ, ծրագրային ապահովում): 4. Կազմել դաշտային տվյալների քարտեզներ և կատարել վերլուծություններ: 5. Կիրառել ճշգրիտ գյուղատնտեսության մոտեցումներ որոշում կայացնելու նպատակով:
<b>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</b>	<b>Դասավանդման մեթոդներ՝</b> դասախոսություններ, «մտազրոի թեմայի շրջանակներում», տեսական նյութի ներկայացում և բացատրություն, քննարկում, «ֆորմատիվ հարցումներ», «համառոտ միտք», «հարց ու պատասխան»  <b>Ուսումնառության մեթոդներ՝</b> մասնակցություն գործնական աշխատանքների, խմբային քննարկումներ, տվյալների վերլուծության վարժություններ ուսումնամեթոդական գրականության ուսումնասիրում, ինքնուրույն կամ անհատական աշխատանքների կատարում
<b>Գնահատման մեթոդները</b>	Քննություն (գրավոր և բանավոր), ինքնուրույն աշխատանքների գնահատում գրավոր նյութի և բանավոր ներկայացման մեթոդով

**7. Դասավանդման և ուսումնառության մեթոդները**

ՄԿԾ-ի համար ուսուցման առաջնային մեթոդը դասախոսություններն են: Դասընթացները կազմակերպվում են առցանց՝ Moodle ուսուցման հարթակի օգնությամբ: Այն դասախոսներին հնարավորություն է տալիս մասնագիտական գրականությունից բացի լրացուցիչ նյութեր, դասախոսություններ կամ հոդվածներ

տրամադրել ուսանողներին և միշտ տեղեկացնել նրանց կատարողականի մասին: Բացի դասախոսություններից, անցկացվում են նաև լաբորատոր և գործնական աշխատանքներ: Ուսանողների ուսումնառությունը նաև կազմակերպվում է լսարանային քննարկումների, խմբային աշխատանքի և շնորհանդեսների պատրաստման միջոցով: Բացի հիմնական դասընթացի նյութից՝ որոշ առարկաներ կարող են հարստացվել հրավիրված դասախոսների տրամադրած նյութերով:

Սույն կրթական ծրագրի շրջանակներում կիրառվում են դասավանդման հետևյալ մեթոդները.

- **Իմացության պարզաբանում** - յուրաքանչյուր թեմայի դասավանդումից առաջ կատարվում են հարցումներ թեմայի վերաբերյալ՝ ուսանողների իմացության մակարդակը պարզելու նպատակով:
- **Տեսական նյութի ներկայացում և բացատրություն** - դասախոսը ներկայացնում է նյութը մանրամասն բացատրություններով: Կիրառվում է նաև համակարգչային ցուցադրություն Power Point տարբերակով, պաստառներ, օգտագործվում է նաև գրատախտակը:
- **Ֆորմատիվ հարցումներ** - նյութի ներկայացման ընթացքում պարբերաբար կատարվում են հարցումներ նյութի ընկալման մակարդակը պարզելու համար:
- **Իմացության համառոտ ներկայացում** - թեման ավարտելուց հետո դասախոսը հանձնարարում է այն ձևակերպել մեկ նախադասությամբ՝ թեմայի յուրացման աստիճանը պարզելու համար:
- **Հարց ու պատասխան** - դասի ավարտին ուսանողների կողմից տրվում են հարցեր, որոնց պատասխանում է դասախոսը:

Լաբորատոր-գործնական պարապմունքների անցկացման համար առկա են համապատասխան ցուցադրական նյութեր, առանձին առարկաների մասով լաբորատոր սարքավորումներ:

Ուսանողը հնարավորություն է ստանում մասնակցել գիտաժողովների և ներգրավվել հետազոտական աշխատանքներին:

**Կիրառվում են ուսումնառության հետևյալ մեթոդները.**

- ուսումնամեթոդական և էլեկտրոնային գրականության ուսումնասիրություն,
- ինքնուրույն, անհատական կամ խմբային աշխատանքների կատարում,
- լաբորատոր փորձերի և գործնական աշխատանքների կատարում,
- մասնակցություն պրակտիկաների և հաշվետվությունների պատրաստում,
- թեմատիկ ռեֆերատների պատրաստում և ներկայացում:

## 8. Գնահատման մեթոդները

ՄԿԾ-ի շրջանակում մշտապես գնահատվում են ուսանողների ուսուցման արդյունքները և փնտրվում գնահատման նոր գործիքներ:

Ուսանողների գիտելիքների և կարողությունների մակարդակի ստուգումը կատարվում է ընթացիկ և վերջնական ստուգումներով: Ընթացիկ ստուգումներն իրականացվում են լսարանում պարբերաբար հարցումների միջոցով, ինքնուրույն աշխատանքների գնահատմամբ ու միջանկյալ քննությունների արդյունքներով: Վերջնական ատեստավորումն իրականացվում է բանավոր ստուգարքի, գրավոր քննության ստուգման ու բանավոր հարցումների արդյունքներով, կամ թեստերով քննություններ հանձնելու արդյունքներով: Ընդհանուր առմամբ կիրառվում է գնահատման բազմագործոնային մեթոդները (յուրաքանչյուր դասընթացին առնչվող բնութագրերը նկարագրված են դասընթացի ծրագրում): Վերջնական գնահատականը ձևավորվում է բազմագործոնային համակարգով՝ ըստ ամբիոններում հաստատված չափորոշիչների:

- ամփոփիչ և վերջնական ստուգումներն անցկացվում են թեստավորմամբ, գրավոր և բանավոր հարցումներով,
- բանավոր մեթոդը կիրառվում է ինքնուրույն աշխատանքների, ընթացիկ և ամփոփիչ գիտելիքների գնահատման ժամանակ:

### Ուղղակի մեթոդներ

**Մասնակցություն/ակտիվություն** - Դասախոսը կարող է կանոնավոր կերպով հարցեր ուղղել ուսանողներին լսարանում: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար ուսանողները ստանում են միավորներ, որոնք կարող են ներառվել ուսանողի ամփոփիչ գնահատականի մեջ:

**Հաճախում** - Ուսանողները պետք է պատշաճ կերպով կանոնավոր հաճախեն դասերին: Բացակայությունը համարվում է հարգելի, եթե ուսանողները ներկայացնում են բժշկի տեղեկանք կամ ունենան դեկանատի նախնական հաստատումը: Ուսանողները պատասխանատվություն են կրում լսարանում կատարված առաջադրանքների և ուսումնառության նյութի համար՝ նույնիսկ հարգելի բացակայության դեպքում: Դասախոսը e-bus համակարգում մուտքագրում է ուսանողի բացակայությունը, սակայն դեկանատը հարկ եղած դեպքում կարող է անվավեր ճանաչել, եթե բացակայությունը համարվել է հարգելի:

**Խմբային աշխատանքներ** - Նշվում են համապատասխան դասընթացների ծրագրերով:

**Անհատական կամ ինքնուրույն աշխատանքներ (լսարանում)** - նշվում են համապատասխան դասընթացների ծրագրերով: Ուսանողներն անհատական առաջադրանքներ և հանձնարարականներ ունեն բոլոր այն առարկաներից, որտեղ արտացոլվում են մասնագիտական վերջնարդյունքների ձեռք բերման հնարավորություններ: Ինքնուրույն աշխատանքի թեմաներն ուսանողներն իրենք են ընտրում:

**Բանավոր շնորհանդեսներ** - Ուսանողները ներկայացնում են խմբային նախագծեր և (կամ) անհատական աշխատանքներ տարբեր պարբերականությամբ՝ հիմնական, անհատական և խմբային: Կատարումը գնահատելու համար կօգտագործվի շնորհանդեսի գնահատման ռուբրիկը:

**Միջանկյալ / եզրափակիչ քննություններ** - Ավարտական քննությունները համապարփակ են: Գրեթե բոլոր դասընթացները միջանկյալ և ամփոփիչ

քննություններն օգտագործում են որպես միջոց՝ ուսանողների կատարողականը և պահանջվող հմտությունների և գիտելիքների ձևավորումը նշելու համար:

**Բաց դասեր** - որպես կանոն կազմակերպվում են ոլորտի առաջատար տնտեսություններում կամ արտադրությունից հրավիրված մասնագետների ներգրավմամբ:

Վերջնական գնահատականը հաշվարկվում է օգտագործելով յուրաքանչյուր նախանշված գործոնի կշռված համամասնությունները:

Հետևյալ գնահատականները տրամադրված փոխակերպման սանդղակով, օգտագործվում են ակադեմիական դասընթացների կատարողականի մակարդակը որոշելու համար: Դասընթացի գնահատումը կատարվում է հետևյալ սանդղակի համաձայն՝ ECTS գնահատման համակարգի հիման վրա.

Evaluation		Accumulated points (%)	ECTS/ATC Grade	Course GP	20 Point Grade
Pass	Գերազանց	96-100	A+	4.0	20
		91-95	A	4.0	19
		86-90	A-	3.7	18
	Լավ	81-85	B+	3.3	17
		71-80	B	3.0	15-16
		66-70	B-	2.7	14
	Բավարար	61-65	C+	2.3	13
		55-60	C	2.0	9-12
		50-54	C-	1.7	8
			< 50	D/F/FX*	0
		0	FN (Failure for Non-Attendance)	0	0
		≥50	S (satisfactory)	-	-
		< 50	U(unsatisfactory)	-	-

**Պրակտիկայի հաշվետվություններ** - Ուսանողները աշխատանքային կիսամյակը՝ պրակտիկան, 16 շաբաթ տևողությամբ պրակտիկայի ծրագրով անցկացնում են մասնագիտական ամբիոնների կողմից՝ ուսանողների հետ համաձայնեցված պրակտիկաների վայրերում (մասնագիտացված ֆերմերային տնտեսություններում, գյուղատնտեսության մասնագիտացումով ՀԿ-ում, կոոպերատիվներում, գիտական և հետազոտական կենտրոններում և այլն): Սա հնարավորություն է տալիս փորձ ձեռք բերել տեսական գիտելիքները գործնականում կիրառելիս: Նրանք սովորաբար ոչ միայն ծանոթանում են տնտեսությանն ու նրա գործունեությանը, այլև աշխատում են հանձնարարված աշխատանք կատարող աշխատակիցների հետ: Աշխատանքային կիսամյակի ավարտից հետո ուսանողները պետք է ներկայացնեն վերջնական գրավոր հաշվետվություն, որն արտացոլում է ընկերության կամ տնտեսության գործունեությունը, ուսանողի դերն աշխատավայրում և առաջարկություններ ապագա զարգացման համար: Պրակտիկայի հաշվետվությունը գնահատվում է ըստ երեք հիմնական բաղադրիչների՝ հաշվետվության բովանդակություն, արտադրությունից պրակտիկայի ղեկավարի գնահատական, բանավոր պատասխան: Գնահատումը կատարվում է տեղեկագրերում՝ հիմք ընդունելով ուսանողի ստացած գնահատականները ստորև նշված գործոններից՝

- Գնահատման թերթիկի միավոր – 70 %
- Գրավոր հաշվետվություն – 10 %
- Բանավոր զեկույց – 20 %

Տվյալները վերլուծվում և հաղորդվում են պրակտիկայի ապագա ծրագրերի բարելավման նպատակով: Պրակտիկայի ծրագիրը կցված է հավելված 4-ում:

**Ավարտական աշխատանք.** Մասնագիտական ամբիոնների կողմից՝ ուսանողների հետ համաձայնեցված, ներկայացվում և հրամանագրվում են բակալավրիական ավարտական (դիպլոմային) աշխատանքների թեմաները, որոնց կատարման համար ուսանողները կիրառում են ուսումնական պլանով նախատեսված առարկաներից ստացած գիտելիքներն ու հմտությունները, առաջնորդվելով ղեկավարի ուղղորդումներով: Ուսումնառության ավարտական կիսամյակում ուսանողները ներկայացնում են ավարտական աշխատանքների հաստատված թեմաներին համապատասխան ավարտուն աշխատանքներ (դիպլոմային աշխատանքներ), որոնց հրապարակային պաշտպանությունը ֆակուլտետում ձևավորված հանձնաժողովի պայմաններում, իրականացվում է բանավոր ներկայացմամբ, շնորհանդեսի միջոցով: Աշխատանքը գնահատվում է պետական ատեստավորման հանձնաժողովի անդամների կողմից նշանակված գնահատականների միջին թվաբանականի հաշվարկով:

**9. Կրթական ծրագրի շրջանակներում իրականացվող պրակտիկան**

Աշխատանքային կիսամյակը նախատեսված է ուսումնական պլանով ուսումնառության 7-րդ կիսամյակում՝ ապրիլի-հունիս ամիսներին, 8 շաբաթ տևողությամբ, և 8-րդ կիսամյակում՝ սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, 8 շաբաթ տևողությամբ:

Պրակտիկաներն անցկացվում են ՀԱԱՀ Նալբանդյանի և Ոսկեհատի ուսումնափորձ-նական տնտեսություններում, բուսաբուծական մասնագիտացմամբ գիտական և հետազոտական կենտրոններում, մարզպետարանների գյուղատնտեսության վարչություններում, համայնքապետարաններում, մասնավոր տնտեսվարմամբ ջերմատնային տնտեսություններում, բուսաբուծության, այգեպտղաբուծության և բանջարաբուծության մասնագիտացումով առաջատար ֆերմերային տնտեսություններում, գյուղատնտեսության մասնագիտացումով ՀԿ-ներում, կոոպերատիվներում և այլ կառույցներում:

Գնահատումն իրականացվում է սանդղակների միջոցով՝

- Գնահատական արտադրության ղեկավարի կողմից 70% /Հավելված 5/
- Գրավոր հաշվետվություն 10%
- Բանավոր պատասխան 20%

Աշխատանքային կիսամյակի ընթացքում (երկու անգամ) համալսարանի ՈԳԱ կենտրոնի միջոցով կատարվում են ուսանողների և գործատուների առցանց հարցումներ, որոնց արդյունքները քննարկվում են դեկանատի աշխատակիցների, պրակտիկայի պատասխանատուի և համակարգող ամբիոնների վարիչների հետ՝ գնահատելու, վերհանելու և մշտադիտարկելու առկա խնդիրները:

**10. Մասնագիտական գործունեության ոլորտը և ապագա կարիերայի հնարավորությունները**

«Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա» կրթական ծրագրով ապագա մասնագետների համար գործատուներ են հանդիսանում ֆերմերային և գյուղացիական տնտեսությունները, գյուղատնտեսական նասնագիտացումով կոոպերատիվները, բաժնետիրական և պետական ձեռնարկությունները, պետական և համայնքային

կառավարման մարմինները, գյուղատնտեսական ոլորտին սպասարկող այլևայլ ձեռնարկությունները, գյուղատնտեսական մասնագիտական խորհրդատվական կառույցները, գիտահետազոտական հիմնարկները, փորձակայանները, ագրոնոմիական ոլորտին առնչվող միջազգային ծրագրերի գրասենյակները, որտեղ առկա են մասնագիտական կադրերի պահանջ, ինչպես նաև բոլոր հնարավորությունները նրանց կարիերայի հետագա աճի համար:

Սույն կրթական ծրագիրը ունի գլխավոր նպատակային խնդիր՝ բավարարելու տեղային, ազգային գործատուների պահանջները:

Ավարտելուց հետո շրջանավարտը կարող է աշխատել որպես՝

- ագրոնոմ,
- ագրոնոմ սելեկցիոներ,
- գյուղատնտեսության խորհրդատու,
- գյուղատնտեսության փորձագետ,
- բնապահպանական և գյուղատնտեսական հկ-ների աշխատակից,
- պետական կառավարման ոլորտի մասնագետ՝ թե՛ ազգային, թե՛ միջազգային մակարդակում,
- մեծ ֆերմերային տնտեսությունների և գյուղատնտեսական ձեռնարկությունների կառավարում:

## **11. ՄԿԾ իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներ**

«Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա» մասնագիտացումով մասնագետների մասնագիտական գիտելիքների տրամադրման համար ֆակուլտետի թողարկող ամբիոններում առկա են մասնագիտացված լաբորատորիա-լսարաններ, որոնք հագեցած են անհրաժեշտ սարքավորումներով, տեխնիկական միջոցներով, մուլյաժներով և հերբարիումներով: Թողարկող ամբիոններին կից լսարանների զգալի մասը կահավորված են համակարգչային և տեսաձայնային սարքավորումներով, ապահովված է ինտերնետ հասանելիությունը: Բացի այդ, ՀԱԱՀ-ն ունի նորագույն տեխնոլոգիաներով ձևավորված և համակարգչային լիարժեք տեխնիկական միջոցներով կահավորված նոր լաբորատորիաներ, լսարաններ, որոնք նույնպես օգտագործվելու են ՄԿԾ-ի իրականացման համար, մասնավորապես՝

- Օրգանական գյուղատնտեսության հագեցած լաբորատորիա
- Ընդհանուր քիմիայի լաբորատորիա
- Հիդրոպոնիկ ջերմատուն
- Սեմինարների, բաց դասերի համար նախատեսված AGRITECH loft սենյակ
- Ընթերցասրահներ՝ հագեցած անհրաժեշտ ռեսուրսներով

ՄԿԾ-ի իրականացման համար, որպես ռեսուրս օգտագործվում են ՀԱԱՀ-ի ուսումնափորձնական տնտեսությունները, փորձարարական և գիտական կենտրոն մասնաճյուղերը, այդ թվում՝

- «Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, մելիորացիայի և ագրոքիմիայի գիտական կենտրոն» մասնաճյուղ
- «Ոսկեհատի խաղողագինեգործության գիտական կենտրոն» մասնաճյուղ
- «Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն» մասնաճյուղ
- Ակունքի ուսումնափորձարարական կենտրոն
- Բալախովիտի ուսումնափորձարարական տնտեսություն

Ստորաբաժանումների առավել արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ է բավարար ապահովվածությամբ ժամանակակից կազմափոխիկա, նախատեսված ուսումնական նյութի ներկայացման և ցուցադրության համար: ԲՈՒՀ-ի էլեկտրոնային և տպագիր գրադարաններում առկա է մասնագիտական գրականություն, որոնցից ուսանողները մշտապես օգտվում են: Տեղեկատվությունը հասանելի է [www.anau.am](http://www.anau.am) կայքի միջոցով:

**12. ՄԿԾ իրականացման համար պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմին ներկայացվող պահանջներ**

Հիմնական պրոֆեսորադասախոսական կազմը յուրաքանչյուր ՄԿԾ-ի կատարման արդյունավետության բաղադրիչն է, որի պրոֆեսիոնալ որակով են պայմանավորված շրջանավարտների վերջնարդյունքները:

Պրոֆեսորադասախոսական կազմը հիմնականում բաղկացած է ոլորտի առաջատար կամ ներգրավված մասնագետներից, որոնք պարբերաբար, ըստ անհրաժեշտության, անցնում են մասնագիտական վերապատրաստումներ: Որակի ապահովման նպատակով պրոֆեսորադասախոսական կազմի համար սահմանվում են մի շարք պահանջներ.

ա) ՄԿԾ սպասարկող պրոֆեսորադասախոսական կազմի առնվազն 50 տոկոսի համար տվյալ ուսումնական հաստատությունը պետք է հանդիսանա հիմնական աշխատավայր,

բ) ՄԿԾ սպասարկող պրոֆեսորադասախոսական կազմի դասախոսների առնվազն 50 տոկոսը պետք է ունենա պետական լիազորված մարմնի կողմից ճանաչված գիտական աստիճան և (կամ) կոչում,

գ) Կրթական ծրագրի իրականացումը պետք է ապահովվի գիտամանկավարժական կադրերով, ովքեր, որպես կանոն, ունեն դասընթացների դասավանդման ուղղվածությանը համապատասխանող բազային կրթություն՝ առնվազն դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորման աստիճանով: Մասնագիտական դասընթացների վարման համար, պետք է ներգրավված լինեն գիտական աստիճան և (կամ) գիտական կոչում, կամ համապատասխան գործունեության ոլորտում մասնագիտական աշխատանքի փորձ և / կամ պարբերաբար վերապատրաստումներ անցնող գիտամանկավարժական կադրեր:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմը պարբերաբար համալրվում է երիտասարդ կադրերով: Պրոֆեսորադասախոսական անձնակազմը պարբերաբար անցնում է վերապատրաստումներ ոլորտի առաջատար մասնագիտացված կազմակերպություններում, գիտական և հետազոտական կենտրոններում, լաբորատորիաներում, առանձին ներկայացուցիչներ վերապատրաստում են անցնում նաև արտերկրի տարբեր ուսումնական և գիտակրթական մասնագիտացված հաստատություններում: Դասախոսական կազմի շարունակական վերապատրաստումները խրախուսվում են.

<b>ՄԿԾ պատասխանատու/-ներ</b>	<b>Գ.Ա. Թովմասյան</b>
<b>Ֆակուլտետի ղեկան</b>	<b>Ա.Զ. Տեր-Գրիգորյան</b>
<b>Ամբիոնի վարիչ</b>	<b>Գ.Ա. Թովմասյան</b>

